Ազգ
Azg
4 ՅՈՒՆԻՍ 2011 ՇԱԲԱԹ 102(4721)
ISSN: 1829-1651

# Լրանում է 6-օրյա պատերազմի 44-ամյակը

**Մերձավոր եւ Միջին Արեւելքը առանց այդ էլ հակասություններով, թերեւս աշխարհի ամենաբարդ տարածաշրջանն էր: Արաբական երկրներում ծայր առած համաժողովրդական խռովությունները, դառնալով լարվածության լրացուցիչ աղբյուր, աննախադեպ սրեցին իրավիճակը տարածաշրջանում: Ինչպես երեւում է, լարվածության պատճառը սոսկ խռովությունները կամ դրանցով պայմանավորված բախումները չեն, այլեւ 6-օրյա պատերազմի 44-ամյակը:**

**Ինչպես հայտնի է, 1967-ի հունիսի 5-ին Իսրայելը 6 օրում ջախջախել էր Սիրիային, Հորդանանին եւ Եգիպտոսին, գրավելով Գոլանի բարձունքները, Սինայի թերակղզին, Երուսաղեմն ու Այսրհորդանանը: Ամենայն հավանականությամբ, պատերազմի 44-ամյակին, այինքն՝ վաղը, բողոքի ցույցեր տեղի կունենան Սիրիայի եւ Լիբանանի գլխավորությամբ արաբական բազմաթիվ երկրներում: Ցույցերի, առավել եւս՝ Գոլանի բարձունքներում եւ Իսրայելի հյուսիսային սահմաններում «ոտնձգությունների» հավանականությունը, «Ջերուսալեմ պոստի» վկայությամբ, ստիպել է վարչապետ Նաթանյահուին նախազգուշացնել Սիրիային ու Լիբանանին: Նա ընդգծել է, որ վճռական հակահարված են տալու ամեն տեսակ ոտնձգություններին:**

Հ. Չ.

# ԱՄՆ դեսպանի հրաժեշտի նամակը

ԱՄՆ դեսպան Մարի Յովանովիչը վերջին մի հայտարարությամբ ընդհանրացրել է երեք տարի Հայաստանում իր գործունեության հիմնական շեշտադրումները: «Ես հեռանում եմ խառը զգացումներով, ուրախ եմ վերադառնալ իմ ընտանիք ու ԱՄՆ-ում իմ ընկերների մոտ, բայց եւ տխուր եմ, որ լքում եմ այս գեղեցիկ երկիրը նման պատմական պահի», իր նամակում, որ հրապարակել է Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը, այսպես է բնութագրել իր հեռացումը Յովանովիչը:



«ԱՄՆ-ը եւ Հայաստանը հպարտանալու շատ բան ունեն: ԱՄՆ-Հայաստան հարաբերությունները հիմնված են ժողովրդավարության, բարգավաճման ու խաղաղության հանդեպ հավատի վրա...», նշել է ԱՄՆ դեսպանը: Յովանովիչը հիշատակել է նախորդ տարի ԱՄՆ նախագահ Օբամայի կողմից Հայաստանի նախագահին ուղարկված հրավերը՝ մասնակցելու Միջուկային անվտանգության գագաթաժողովին Վաշինգտոնում, ինչը, ըստ Յովանովիչի, ընդգծում է ԱՄՆ-ի վերաբերմունքը Հայաստանի հանդեպ՝ որպես լավ գործընկերոջ զանգվածային ոչնչացման զենքերի տարածումը կանխելու հարցում: Իսկ ԱՄՆ-ի պետքարտուղար Քլինթոնի այցը Հայաստան, Յովանովիչի հիշեցմամբ, առաջինն էր 18 տարվա ընթացքում:

ԱՄՆ դեսպանը անդրադարձել է նաեւ ԱՄՆ կառավարության աջակցությանը Հայաստանին, ի շարս այլ նախագծերի նշելով նաեւ Հազարամյակի մարտահրավերների ծրագրով հատկացված 180 մլն դոլարով կատարված աշխատանքները: Հիշատակելով Հայաստանի կառավարության հաջողությունները թրաֆիքինգի դեմ պայքարում եւ գլոբալ անվտանգության հարցում ներդրմամբ՝ ԱՄՆ դեսպանն ընդգծել է, որ համաներմամբ 2008 թ. մարտի 1-ի իրադարձություններից հետո ձերբակալված անձանց ազատումը եւս առաջընթաց է:

«ԱՄՆ-ը վճռական է աջակցելու Լեռնային Ղարաբաղի խաղաղ կարգավորմանը: Մենք շարունակում ենք աջակցել Հայաստան-Թուրքիա հաշտեցմանը՝ այստեղ (Երեւանում-Ա.Հ.) եւ Անկարայում», գրել է Մարի Յովանովիչը, ավելացնելով, որ ԱՄՆ-ը կշարունակի իր աջակցությունը նաեւ իրավունքի գերակայության, լավ կառավարման ու մարդու իրավունքների հարգման ուղղությամբ զարգացմանը: «Միայն հայերն իրենք պետք է քայլեր կատարեն իրագործելու ժողովրդավարական իրենց իղձերը, բայց ամերիկացի ժողովուրդը պատրաստ է օգնել Հայաստանին իրականացնելու դա՝ առաջընթացի համար»:

«Ես հեռանում եմ Հայաստանից վստահությամբ, որ մեր հարաբերությունները կշարունակեն ամրապնդվել ու որ միասին մենք կգտնենք նոր ուղիներ՝ ձեւավորելու բոլորի համար շահեկան ապագա», եզրափակել է Մարի Յովանովիչը:

Ա. Հ.

# Ի՞նչ է խնդրել Մամեդյարովը

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Ադրբեջանի ԱԳՆ մամլո ծառայությունը տարածել է բավական ուշագրավ տեղեկատվություն: Ըստ այդմ՝ Վաշինգտոն կատարած աշխատանքային այցի շրջանակներում Էլմար Մամեդյարովը պաշտոնական հանդիպումներ է ունեցել ԵԱՀԿ Մխ ամերիկացի համանախագահ Ռոբերտ Բրադկեի, Բրուկինգի ինստիտուտի ԱՄՆ եւ Եվրոպայի կենտրոնի տնօրեն Ֆաինա Հիլլի, Կարնեգի կենտրոնի միջազգային խաղաղության հիմնադրամի Ռուսաստանի եւ Եվրոպայի հարցերով առաջատար հետազոտող Թոմաս դե Վաալի եւ Գեյմստաունի հիմնադրամի տնօրեն Գլեն Հովարդի հետ: Առաջինի հետ նա քննարկել է ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցեր, ինչը միանգամայն բնական է:

Արտառոցն այն է, որ Ադրբեջանի ԱԳ նախարարը ոչ միայն հանդիպել է ամերիկյան փորձագիտական հանրության ներկայացուցիչների հետ, այլեւ, ինչպես ասված է պաշտոնական հաղորդագրությամբ, «մանրամասն տեղեկատվություն է տվել Ադրբեջանի կողմից տարվող անկախ քաղաքականության, տարածաշրջանային համագործակցության, հատկապես էներգետիկ փոխադրումների նախագծերում նրա դերի, ինչպես նաեւ ղարաբաղյան կարգավորման բանակցային գործընթացի մասին»:

*Տես էջ 2*

ՍՆՆԴԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

# Հնարավոր է, որ Հայաստանը եւս արգելի բանջարեղենի ներկրումը եվրոպական երկրներից

**Տարիներ շարունակ մեր երկրում սննդի անվտանգությունն ավելի քան մտահոգիչ վիճակում է, այս պայմաններում լրացուցիչ անհանգստության պատճառ դարձան հիմա էլ իսպանական ու գերմանական վարունգները: Հիշեցնենք, որ մայիսի 24-ին գերմանացի փորձագետները հանդես եկան հայտարարությամբ, որ Գերմանիայում ու եվրոպական այլ երկրներում տարածված աղիքային վարակի աղբյուրն Իսպանիայից ներմուծված վարունգներն են: Սակայն մի շաբաթ անց գերմանացիներն հերքեցին իրենց իսկ հայտարարությունը՝ խոստովանելով, որ վարակի աղբյուրը թերեւս պետք է փնտրել Գերմանիայի հյուսիսային երկրամասերի մթերքների մեջ: Երեկվա համարում «Ազգը» գրել էր, որ հունիսի 1-ի դրությամբ Գերմանիայում աղիքային սուր վարակով ախտահարված հիվանդների թիվն արդեն եղել է ավելի քան 1500 հոգի, եւ Իսպանիայի կառավարությունը մտադիր է Գերմանիայից փոխհատուցում պահանջել գերմանացի փորձագետների սխալի համար, ինչն իսպանացի հողագործներին մեծ վնասներ պատճառեց:**

**Երեկ «Նովոստի» մամուլի կենտրոնում՝ ասուլիսի ժամանակ, գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ Գրիգոր Գրիգորյանն անդրադառնալով «Ազգի» հարցին՝ Հայաստանին որքա՞ն են սպառնում իսպանական վարունգներն ու Հայաստան ԵՄ-ի ո՞ր երկրներից է արգելվել վարունգի ներմուծումը, պատասխանեց. «Այս պահին դադարեցրել ենք Իսպանիայից բոլոր տեսակի բուսական բանջարեղենի ու հասապտուղների ներկրումը: Ներկայումս լրացուցիչ ուսումնասիրություններ են կատարվում, ու եթե պարզվի, որ բանջարեղենի կամ բուսական ծագում ունեցող այլ սննդամթերքի ներկրումն ուրիշ երկրներից իսկապես վտանգավոր է, ապա դրանց ներմուծումը եվրոպական երկրներից կկասեցվի: Այս պահին վտանգ կա, սակայն արգելք դնելիս պետք է հաշվի առնենք, որ այստեղ տնտեսական շահեր էլ կան»:**

**Այնուհետեւ անդրադառնալով «Գումի շուկային» հարակից մսի կրպակների գործունեությունը դադարեցնելուն՝ պարոն Գրիգորյանն ընդգծեց, որ դրանց աշխատանքի կասեցումը եղել է օրենքի սահմաններում. «Իսկ դրանց գործունեությունը դադարեցվել է, քանի որ այդ կրպակներում խախտվել են սանիտարահիգիենիկ կանոններն ու «Սննդի անվտանգության մասին» օրենքի մի շարք դրույթներ: Մենք այդ կրպակները չենք փակել, պարզապես տվել ենք ժամանակ, որ տնտեսվարող սուբյեկտներն ուղղեն բացթողումներն ու կրպակները բերեն պատշաճ վիճակի»:**

Ի. Պ.

# Դավութօղլուի ուրախությունն ու հույսերը՝ Կազանին ընդառաջ

**Ղարաբաղյան հակամարտության հարցում որեւէ կերպ դերակատարություն ունենալու ցանկությունը Թուրքիային երբեմն դնում է այնպիսի վիճակների մեջ, որ որեւէ հավաքում տեսնելով Հայաստանի ներկայացուցիչներին, ուղղակի բարեւելու պարագայում անգամ իրենց թույլ են տալիս հետո հայտարարել, թե հանդիպել ու դեռ քննարկումներ էլ ունեցել են: Հայ-թուրքական հարաբերությունների առնչությամբ որեւէ կերպ հանդիպումներ սարքելու այս մոտեցումը հատկապես դրսեւորվում է, երբ թուրքական կողմից դերակատարություն է ունենում արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն:**

**Իտալիայի միավորման 150-ամյակին նվիրված միջոցառումներին Թուրքիան ներկայացնում էր Ահմեդ Դավութօղլուն, քանի որ Թուրքիայի նախագահը վերջին պահին չէր կարողացել մեկնել Հռոմ՝ հիվանդության պատճառաբանությամբ: Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը եւս հրավիրվել էր տոնակատարություններին: Դավութօղլուն Հռոմից վերադառնալիս թուրքական լրատվամիջոցներին հայտարարել է, որ դրական նշաններ է տեսնում «Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խնդրում առաջընթաց ունենալու» առնչությամբ, ընդ որում՝ Թուրքիայի արտգործնախարարը ողջունել է «Ադրբեջանի հստակ ու լավատես դիրքորոշումը» այդ առումով:**

**Թուրքիայի ԱԳ նախարարի խոսքերով, որ ներկայացնում է «Զաման» օրաթերթը, հնարավորություն է եղել Հռոմում «ողջունել Հայաստանի նախագահին՝ հանդիսությունից հյուրերին տանող ավտոբուսում»: Բայց դրա փոխարեն, Դավութօղլուն, իր ներկայացմամբ, ավելի շատ ժամանակ է ունեցել խոսելու հանդիսությանը մասնակցող Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ, անգամ հասցրել է քննարկել ղարաբաղյան խնդրի «որոշ մանրամասներ»:**

**Դավութօղլուն հույս է հայտնել, թե Կազանում Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների հանդիպումը առաջընթաց կլինի: Առաջընթաց ունենալու «նախանշանները դրական են», ըստ Դավութօղլուի: «Եկեք սպասենք Կազանի հանդիպման արդյունքներին: Մենք հույս ունենք որոշ դրական քայլեր տեսնել», ասել է Դավութօղլուն Ալիեւի հետ հանդիպումից հետո: «Ես ուրախ էի տեսնել Ալիեւի առավել լավատեսական մոտեցումն ու վճռականությունը», ասել է Թուրքիայի արտգործնախարարը:**

**Ակնհայտորեն Թուրքիան ցանկանում է որեւէ կերպ ներգրավվել այն գործընթացներում, որ առնչվում են ղարաբաղյան խնդրին, իսկ Կազանում տեղի ունենալիք Ալիեւ-Սարգսյան հանդիպման առնչությամբ հնչող մեծ հույսերն ու ավելի հաճախ՝ ակնկալիքները թերեւս դրդում են, որ թուրք դիվանագետը առիթներ փնտրի արտահայտելու այդ բանակցություններում առաջընթաց տեսնելու թուրքական «հույսերը»:**

Ա. Հ.

# Մահացել է «Բժիշկ Մահը»

Հունիսի 2-ի վաղ առավոտյան Դետրոյթում մահացել է ամերիկահայ բժիշկ, էվթանազիայի քարոզիչ Ջեկ Գեւորգյանը, որն առավել հայտնի է «Բժիշկ Մահ» անունով: Զբաղվելով բժշկական գործունեությամբ՝ Գեւորգյանը հանդես է եկել էվթանազիայի պաշտպանությամբ, երբ հիվանդին այլեւս անհնար է բժշկական օգնություն ցուցաբերել: Գեւորգյանը իր դասախոսությունների ընթացքում հայտարարում էր, որ չպետք է տանջել հիվանդին, եթե փրկության որեւէ շող չկա: 1989-ին Գեւորգյանը մշակեց «Ինքնասպանության մեքենան» (մերսիտրոն) եւ թունավոր դեղահաբերի մահացու չափաբաժին էր ներարկում սեփական կյանքին վերջ տալու անընդունակ հիվանդի արյան մեջ: 1990-ի հունիսի 4-ին օգտագործելով մերսիտրոնը՝ կյանքին վերջ տվեց առաջին հիվանդը, որը տառապում էր Ալցհայմերի հիվանդությամբ: 1990-1998թթ. մերսիտրոնից օգտվել է ավելի քան 130 հիվանդ: Գեւորգյանի գաղափարները դատապարտել են բժշկական ընկերակցությունն ու ԱՄՆ կառավարությունը:



1991-ին Գեւորգյանին զրկում են բժշկական պրակտիկայով զբաղվելու լիցենզիայից: Հետագայում նա 4 անգամ դատարան է ներկայացել, սակայն վկաների ցուցմունքների պակասի պատճառով արդարացվել է: 1999-ին նրան ձերբակալեցին, երբ հեռուստատեսությամբ ցուցադրվեցին կադրեր, որտեղ Գեւորգյանը մերսիտրոնի օգնությամբ «սպանում է» իր հիվանդին: 1999-ի մարտին նա մեղադրվեց երկրորդ աստիճանի ուղղակի սպանության մեջ՝ դատապարտվելով 10-25 տարվա ազատազրկման:

2007-ի հունիսի 1-ին լավ վարքի համար 8 տարի կալանավայրում անցկացրած 79-ամյա Ջեկը ժամկետից 2 տարի շուտ ազատ արձակվեց:

2007-ին Գեւորգյանը հայտարարեց, որ մտածում է քաղաքական կարիերա ստեղծելու մասին եւ կպայքարի էվթանազիայի օրինականացման համար: 2008-ին նա մասնակցեց Կոնգրեսի ընտրություններին որպես անկախ թեկնածու, սակայն նրան աջակցեց ընտրողների ընդամենը 3 տոկոսը:

2010-ին էկրան բարձրացավ եւ մեծ աղմուկ հանեց «Դուք չգիտեք Ջեկին» սոցիալական դրաման: «Բժիշկ Մահ»-ին մարմնավորում էր ամերիկացի նշանավոր դերասան Ալ Պաչինոն, արժանացավ «Ոսկե գլոբուս» մրցանակի լավագույն դերի համար:

Detroit Free Press-ի փոխանցմամբ՝ 83-ամյա Գեւորգյանի փաստաբանն ու զարմուհին եղել են իր կողքին կյանքի վերջին րոպեներին: www.clickondetroit.com կայքն էլ գրում է, որ մահվանից առաջ «Բժիշկ Մահը» ցանկություն է հայտնել լսելու սիրելի երգահանի՝ Բախի ստեղծագործությունները:

«Ջեկին մահացավ Բախի հնչյունների ներքո», գրում է կայքը:

Ջեկ Գեւորգյանը հոսպիտալացվել է մոտ 2 շաբաթ Դետրոյթում թոքաբորբի սրման եւ երիկամների կրկնվող հիվանդության պատճառով:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Երբ Եվրոհանձնաժողովը մայիսի 25-ին հրապարակեց «Նոր պատասխան փոփոխվող հարեւանությանը» փաստաթուղթը, Ադրբեջանում սկսեցին թմբկահարել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության կազմի մոտալուտ փոփոխմամբ Ադրբեջանի համար բացվող նոր հնարավորությունների մասին: Պատճառը Մինսկի խմբում ներգրավվելու ԵՄ պատրաստակամությունն էր: Ադրբեջանցի վերլուծաբանները շտապեցին եզրակացնել, որ համանախագահությունում ԵՄ-ն կփոխարինի Ֆրանսիային: Ֆրանսիական կողմը, սակայն, պաշտոնապես պատասխանել է, որ շարունակելու է համանախագահել Մինսկի խմբում: Ի՞նչ կփոխի այս դեպքում ԵՄ-ի մասնակցությունը բանակցային ձեւաչափին:

Մայիսի 25-ին արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության ԵՄ-ի գերագույն հանձնակատար **Քեթրին Էշթոնը** եւ ընդլայնման հարցերով հանձնակատար **Շտեֆան Ֆյուլեն** հրապարակեցին «Նոր պատասխան փոփոխվող հարեւանությանը» համատեղ հայտարարությունը: Փաստաթղթում, որը Եվրոհանձնաժողովի կողմից ներկայացվել է Եվրախորհրդարանին, ԵՄ Խորհրդին, Եվրոպական սոցիալական եւ տնտեսական, տարածաշրջանների կոմիտեներին, մասնավորապես նշվում է.

# ԵՄ-ն ԵԱՀԿ Մինսկի խմբում. Ի՞նչ կփոխվի

«ԵՄ-ն արդեն ակտիվություն է ցուցաբերում՝ ձգտելով կարգավորել հարեւանության տարածաշրջանում առկա հակամարտություններից մի քանիսը: ...ԵՄ-ն պատրաստ կլիներ ներգրավվել այն ձեւաչափերում, որտեղ դեռեւս ներկայացված չէ, օրինակ՝ Ղարաբաղյան հակամարտության հարցով ԵԱՀԿ Մինսկի խմբում: ԵՄ-ն մտադրություն ունի աջակցություն ցուցաբերել անջատված տարածքներում վստահության մթնոլորտի ձեւավորմանը եւ դրանց օժանդակության տրամադրմանը, հակամարտություններին առնչվող միջազգային ջանքերին եւ կառույցների գործունեությանը, ինչպես նաեւ, նշված փուլի ավարտից հետո՝ կարգավորման սկզբունքների կյանքի կոչմանը: Նա կշարունակի նաեւ ընդդիմանալ ուժի միջոցով կատարված սահմանային փոփոխություններին»:

Փաստաթղթի հրապարակումից հետո ադրբեջանական մամուլում շրջանառվեցին լուրեր՝ իբր ԵՄ-ն Մինսկի խմբում կփոխարինի Ֆրանսիային: Այս հրապարակումները նույնիսկ ստիպեցին միջազգային կառույցներին ահազանգել, որ այժմ Մինսկի խմբի ձեւաչափը փոփոխելու լավագույն ժամանակը չէ: Նման հայտարարությամբ մասնավորապես հանդես էր եկել Միջազգային ճգնաժամային խմբի եվրոպական ծրագրերի տնօրեն Սաբինա Ֆրեյզերը:

Հետաքրքիր է, ի՞նչն էր ադրբեջանական նման ապատեղեկատվության հիմք հանդիսացել, երբ Եվրոհանձնաժողովի ներկայացուցիչների հայտարարությունում որեւէ կերպ չի ակնարկվում Ֆրանսիայի համանախագահությանը փոխարինելու հնարավորության մասին: Այնուամենայնիվ, ադրբեջանական կողմի մտայնությունները լիովին փարատվեցին ֆրանսիական կողմի պաշտոնական պատասխանի արդյունքում: «ԵՄ-ն ցանկանում է օժանդակել ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը, միեւնույն ժամանակ չի վիճարկում ԵԱՀԿ Մինսկի խմբում ֆրանսիական համանախագահությունը», հայտարարել է ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանությունն ի պատասխան «Արմեդիա» գործակալության հարցման:

Այսինքն՝ առաջիկայում ղարաբաղյան կարգավորման միջնորդային ձեւաչափը կարող է ոչ թե փոփոխվել, այլ համալրվել: Իսկ ինչո՞վ է դա հղի:

Նախ նշենք, որ ԵՄ-ը միջազգային այն ուժն է, որը երբեւէ պատրաստակամություն է հայտնել ուղղակիորեն աշխատելու Արցախի հետ: Այս առումով հիշենք Եվրախորհրդարանի պատգամավորներ Դամիեն Աբադի (Եվրոպական ժողովրդական կուսակցություն) եւ Միշել Ռիվազիի (Եվրոպական կանաչների միություն) այցն Արցախ նախորդ տարվա նոյեմբերին, որի ընթացքում խորհրդարանականները խոսել էին Արցախի հետ համագործակցության ձեւաչափերի մշակման մասին: Մյուս կողմից, ԵՄ Արեւելյան գործընկերության ծրագիրն այն ձեւաչափն է, որի շրջանակում քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ համագործակցության հարթակներում չի բացառվում չճանաչվածների ներկայացուցիչների ներգավումը: Այսինքն, հնարավոր է՝ ԵՄ-ն դառնա այն ուժը, որի օժանդակությամբ միջնորդներին կհաջողվի անմիջականորեն ներկայացված լինել Արցախում եւ համագործակցել Ստեփանակերտի հետ: Առավել եւս այդ մասին է վկայում «Նոր պատասխան փոփոխվող հարեւանությանը» փաստաթղթի այն ձեւակերպումը, համաձայն որի՝ «ԵՄ-ն մտադրություն ունի աջակցություն ցուցաբերել անջատված տարածքներին՝ օժանդակություն տրամադրելու հարցում»:

Մյուս կողմից, սակայն, միջնորդող նոր կողմի ներգրավվածությունը ԵԱՀԿ-ի Մխ-ում, մի շարք նոր խնդիրներ կարող է առաջ բերել, առավել եւս, երբ խոսքը վերաբերում է 27 երկրի շահեր մեկտեղող ԵՄ-ին: Սակայն այս հանգամանքից բխող վտանգները, կարելի է ասել, հնարավորինս չեզոքացված են այն բանից հետո, երբ նախորդ տարվա դեկտեմբերին սկսեց գործել արտաքին գործողությունների եվրոպական ծառայությունը կամ ԵՄ արտգործնախարարությունը: Առավել կենտրոնացված գործառութային կառույցի հիմնումը ոչ միայն ինստիտուցիոնալ փոփոխություն էր, այլեւ՝ բովանդակային: ԵՄ ընդհանրական արտաքին քաղաքականությունն այլեւս ոչ թե ազգային պետությունների քաղաքական շահերի պարզ գումարն է, այլ՝ դրանց սինթեզը, որն ինչ-որ մասով համընկնում է ԱՄՆ արտաքին քաղաքական շահերին, սակայն նաեւ որոշակիորեն տարբեր է: Թերեւս պատահական չէ նաեւ այն հանգամանքը, որ ղարաբաղյան կարգավորման գործընթացում ներգրավվելու պատրաստակամության մասին Եվրոհանձնաժողովի ներկայացուցիչը հայտարարում է այժմ՝ արտաքին քաղաքական գերատեսչության վերջնական ձեւավորումից հետո:

Ինչեւէ, ԵՄ-ի ներգրավվմամբ ԵԱՀԿ Մխ-ում կարող են ամրապնդվել «արեւմտյան» թեւի դիրքերը: Սա, իր հերթին, լրացուցիչ երաշխիք է, որն առավել կնվազեցնի միջնորդներից որեւէ մեկի մենաշնորհի սահմանումը կարգավորման գործընթացի նկատմամբ: Հաշվի առնելով նաեւ այն հանգամանքը, որ ԵՄ-ը եւս բավականին շահագրգռված է մեր տարածաշրջանում ազատ հաղորդակցության վերականգնմամբ, ապա հնարավոր է՝ Մինսկի խմբում նրա ներգրավվածությունն առավել ակտիվացնի կարգավորման գործընթացը, այլ ոչ՝ հակառակը: Արդյունքում, նոր շունչը, որ բանակցություններին կհաղորդի ԵՄ ներգավումը, կսահմանափակի բանակցային գործող ձեւաչափից «փախուստի դիմելու»՝ կողմերի հնարավորությունն այն պատճառաբանությամբ, թե Մինսկի խումբը սպառել է իրեն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԵԱՀԿ Մխ համանախագահները որեւէ կերպ մինչեւ այժմ դեմ չեն արտահայտվել ղարաբաղյան կարգավորման գործընթացում ԵՄ ներգրավվածությունն ակտիվացնելու պատրաստակամությանը՝ կարելի է ենթադրել, որ Բրյուսելի հաշվին Մխ ընդլայնումը տեղի կունենա նրանց լուռ համաձայնությամբ: Իսկ միջնորդների այս համերաշխությունը հուշում է, որ ղարաբաղյան կարգավորման գործընթացում մոտակա առաջընթացի կանխատեսումներն այնքան էլ զուրկ չեն հիմքերից:

Մ. ՍԵՄԵՐՋՅԱՆ

# Ի՞նչ է խնդրել Մամեդյարովը

*1-ին էջից*

**Արդյոք «անկախ քաղաքականություն իրականացնող» երկրի արտգործնախարարը հաշվետո՞ւ է Միացյալ Նահանգների, թեկուզ եւ շատ ազդեցիկ, բայց, այնուամենայնիվ, փորձագիտական հանրության առջեւ: Այս նրբությունն, իհարկե, Ադրբեջանի ԱԳ նախարարությունում չեն «նկատել»: Այսինքն, չեն հասկացել, որ դրանով իրենց եւ Մամեդյարովին դնում են անհարմար վիճակում: Նա գուցե այլ նպատակով է հանդիպել Ֆաինա Հիլլին, Թոմաս դե Վաալին եւ Գլեն Հովարդին, բայց այդ մասին տեղեկատվությունը կառուցված է այնպես, որ տպավորություն է ստեղծվում, թե Էլմար Մամեդյարովի առջեւ դրված է եղել ամերիկյան ոչ միայն պաշտոնական շրջանակների, այլեւ փորձագետների մոտ ամեն գնով արդարանալու խնդիր:**

**Սա, ըստ երեւույթին, կապված է վերջին շրջանի ոչ միանշանակ քայլերի հետ, որ ձեռնարկվեցին Ադրբեջանում: Խոսքը թերեւս «երբեք ՆԱՏO-ին չանդամակցելու» մասին նույն Մամեդյարովի արած հայտարարության մասին է, ինչին հետեւեց «մշտական չեզոքության» անցնելու որոշումը: Շուրջ մեկուկես տասնամյակ Միացյալ Նահանգների եւ առհասարակ արեւմտյան աշխարհի հետ «սիրախաղ» անելուց հետո, իհարկե, Ադրբեջանը բացատրություններ տալու խնդիր անպատճառ ունի: Բայց որքանո՞վ դրանք ընդունելի են ամերիկյան փորձագետների համար՝ դժվար է ասել:**

**Բայց, դատելով ամերիկյան որոշ լրատվամիջոցներում այս օրերին ԼՂ խնդրի վերաբերյալ հրապարակումների տոնայնությունից, Մամեդյարովի հանդիպումները չի կարելի լիովին ձախողված համարել: Նրան կարծես հաջողվել է գոնե տեղեկատվական մակարդակում «համախոհներ գտնել»: Իհարկե՝ ոչ առանց լուրջ եւ ծանրակշիռ ջանքերի, որոնց թվում, պետք է համոզված լինել, ամենեւին էլ երկրորդական չէին կարող լինել «Ադրբեջանի արագ աճող արտարժույթային պահուստները»:**

**Մամեդյարովն ամերիկյան փորձագիտական հանրության «հսկաներին» բացատրություններ է տվել նաեւ ՄԱԿ-ի Ախ ոչ մշտական անդամ ընտրվելու իր երկրի ցանկության թեմայով: Եվ, անշուշտ, աջակցություն է խնդրել դրա համար «բավարար մթնոլորտ ձեւավորելու հարցում»: Այդ հարցով քվեարկություն սպասվում է գալիք հոկտեմբերին:**

**Ոչինչ չես ասի. եթե երկրի արտաքին գործերի նախարարն է այդքան անթաքույց լոբբիստական աշխատանք տանում, ապա կարելի է պատկերացնել, թե ինչպես են աշխատում արտերկրում ադրբեջանական դեսպանատներն ու նրանց շուրջը պտտվող զանազան «թուրքագետներն» ու «տարածաշրջանային եւ գլոբալ անվտանգության հարցերով փորձագետները»:**

**Քաղաքականությունն, իհարկե, առաջնորդվում է «նպատակն արդարացնում է միջոցները» սկզբունքով: Բայց երբ դա արվում է չափազանց անթաքույց, ապա ոչ թե դժգոհություն, այլ խղճահարություն է հարուցում այն երկրի հանդեպ, որ ոչնչի, անգամ սեփական արտգործնախարարի հեղինակության տրորման առջեւ կանգ չի առնում, միայն թե հասնի «բաղձալի նպատակին»: Եվ խղճահարությունն ավելի է խորանում, երբ հասկանում ես, որ այդ «նպատակը» ոչ այլ ինչ է, քան «տարածաշրջանային առաջատարի» իր իսկ հնարած իմիջն աշխարհին ընդունելի դարձնելու ծիծաղելի ճիգ:**



# Երդմնազանց

**Ինչպես սպասվում էր, նախորդ օրը Ամենայն հայոց կաթողիկոսի տնօրինությամբ Ժնեւի Սբ. Հակոբ եկեղեցու հոգեւոր հովիվ Աբել քահանա Մանուկյանը կարգալույծ հռչակվեց եւ այդուհետ դասվեց աշխարհականների շարքը՝ Հրաչ Մանուկյան անուն-ազգանունով: Երեկ չուշացավ վերջինիս արձագանքը՝ ինքը չի ընդունում հայոց հայրապետի տնօրինումը, այն համարելով «անարդար, անընդունելի եւ ապօրեն», եւ հաղորդագրությունը ստորագրում է իր նախկին՝ եկեղեցական անունով:**

**Սա ոչ միայն անհնազանդություն է, որի համար նախապես Մայր աթոռի հոգեւոր գերագույն խորհուրդը նախազգուշացրել էր նրան առնվազն երկու անգամ, իսկ Վեհափառ հայրապետը կախակայել էր եւ կրկին հորդորել նրան գալ Մայր աթոռ Սբ. Էջմիածին, այլեւ ըմբոստություն Վեհափառի հոգեւոր իշխանության դեմ եւ երդմնազանցություն Հայ առաքելական եկեղեցու նվիրապետական կարգերի նկատմամբ: Մեր եկեղեցին, իր ժողովրդավարական էությամբ հանդերձ, եկեղեցական սպասավորության մեջ, բնականաբար, ունի իր կանոնները, որոնք նման են զինվորական ծառայության պահանջներին՝ կաթողիկոսը կամ եպիսկոպոսը նրանք են տալիս հոգեւոր իշխանության եւ ծառայության իրավունք եւ իրենք էլ կարող են այն վերցնել՝ եթե խրատները, հորդորներն ու նախազգուշացումները արհամարհվեն կամ անտեսվեն: Եվ յուրաքանչյուր եկեղեցական, նախքան կարգ ստանալը կամ ձեռնադրվելը եւ այդ ընթացքում հնազանդության երդում է տալիս «առաջի Աստուծոյ եւ մարդկան»: Այն էլ բազմիցս:**

**Ներկա պարագայում գործ ունենք երդմնազանցի հետ, որ անկախ իր պատճառ-պատճառաբանություններից պետք է պատժվի՝ զրկվելով իրեն տրված հոգեւոր իշխանությունից: Դրանից հետո եկեղեցին այլեւս անելիք չունի: Բայց անելիք ունի Հայ եկեղեցու անդամ աշխարհականը, հոտը՝ ենթակային այլեւս չի ընդունում որպես քահանա, որպես եկեղեցական: Վերջ: Հ. Ա.**

# Ազատ է արձակվել 376 դատապարտյալ, 5-ի պատժաչափը կրճատվել է

**Հունիսի 2-ի դրությամբ, արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներից ազատ է արձակվել 376 դատապարտյալ, միաժամանակ կրճատվել է 5 դատապարտյալի պատժաչափը:**

# Զ. Փոստանջյանի եղբայրը համաներմամբ ազատ է արձակվել

**Երեկ դատավոր Արթուր Մկրտչյանի որոշմամբ «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Զարուհի Փոստանջյանի եղբայրը՝ Տիգրան Փոստանջյանը համաներման կիրառմամբ դատարանի դահլիճից ազատ է արձակվել: Նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 311 (1)-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական գործը կարճվել է:**

# Բյուրականի աստղադիտարանը կկանխարգելի տիեզերական վթարները




1957-ից երկրից արձակված մեծ թվով արբանյակները աղտոտել են շրջակա տարածքն ու տիեզերքը: Տիեզերքում այսօր կա 6.000 տոննա մետաղ, որը, աստղագետների գնահատմամբ, ավելի շատ է, քան բնական ընդերքներից առաջացած աղբը: Հենց այդ հավաքված աղբն է գլխավոր պատճառը, որ գրանցվում են բեկորների եւ տիեզերական նավերի բախման բազմաթիվ դեպքեր: Աստղագետները մտահոգված են, որ 2020-2030թթ. խիստ դժվար կամ անհնար կդառնա դեպի տիեզերք նոր արբանյակներ արձակելը, քանի որ տիեզերքում մեծ արագությամբ պտտվող մասնիկները դառնում են գործող արկեր կամ փամփուշտներ, որոնք սպառնում են արբանյակներին:

Բյուրականի աստղադիտարանը շուտով պայմանագիր կկնքի ռուսական «Ռոսկոսմոս»-ի հետ՝ տիեզերական աղբի դիտում իրականացնելով կանխարգելելու տիեզերական վթարները:

Թեպետ Բյուրականի աստղադիտարանը դեռ մի քանի տասնամյակ առաջ արդեն որոշակի գործունեություն ծավալել է տիեզերական աղբի հետազոտման եւ վթարների կանխարգելման խնդիրներով, սակայն Խորհրդային Միության փլուզումից հետո գիտության ֆինանսավորումը մի քանի անգամ կրճատվեց, եւ աշխատանքները դադարեցվեցին:

Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի տնօրեն **Հայկ Հարությունյանի** հավաստիացմամբ՝ այսօր էլ Հայաստանում գիտությամբ զբաղվելը բավական բարդ եւ թանկ հաճույք է, որովհետեւ գոյություն ունեն ֆինանսական խնդիրներ: Հենց դա է պատճառը, որ աստղադիտարանը չի մերժել Ռուսաստանի առաջարկը տիեզերական աղբի հետազոտման վերաբերյալ:

Հայաստանի եւ Ռուսաստանի աստղադիտարանների միջեւ պայմանագիրը նախատեսվում է կնքել օգոստոսին: Հետազոտման աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար Բյուրականի աստղադիտարանը կհամալրվի ժամանակակից մեծ եւ փոքր դիտակներով: Ռուսական կողմը աշխատանքներն իրականացնելու համար կհատկացնի 2-3 մլն եվրո:

Հարությունյանը հերքեց խոսակցությունները, թե Բյուրականի աստղադիտարանը վաճառվել է Ռուսաստանին:

«Ռուսաստանի հետ համաձայնագիրը չի նշանակում, որ մենք վաճառում ենք մեր ազգային արժեքը: Աստղադիտարանը որոշ համաձայնագրերի միջոցով փորձում է կատարել աշխատանքներ, որոնք սեփական բյուջեի միջոցով անհնար է իրականացնել»:

Հ. Հ.

# «Հայկական եկեղեցիների վրացականացման միտում չկա»

## *Վրաստանում Հայաստանի դեսպանը խորհուրդ տվեց հայոց պատմություն ինտերնետով սովորել*

Հայ-վրացական հարաբերությունների մասին խոսելիս Վրաստանում Հայաստանի դեսպան **Հովհաննես Մանուկյանը** մեջբերում է Վրաստանի ԱԳ նախարար Գրիգոլ Վաշաձեի խոսքը՝ հարաբերությունները ստրատեգիական գործընկերության հարաբերություններ են:

Մանուկյանն ավելացնում է, որ գործնական արդյունավետ համագործակցության մթնոլորտը հնարավորություն է տալիս հարցերն արդյունավետ կերպով լուծելու:

«Սակայն մենք դեռեւս հարաբերությունները լավացնելու պոտենցիալ ունենք եւ պետք է հասնենք նրան, որ մեր հարաբերություններն իսկապես ֆիքսվեն որպես ստրատեգիական գործընկերության հարաբերություններ», ասաց դեսպանը:

«**Ազգ**»-ի հարցին ի պատասխան՝ Մանուկյանն ասաց, որ այսօր Վրաստանում հայկական եկեղեցիների վրացականացման միտում չկա:

«Ունենք որոշակի խնդիրներ, որոնք ժամանակին ծագել են ու մինչ օրս լուծում չեն ստացել: Սա ոչ միայն աշխարհիկ, այլեւ հոգեւոր իշխանության գործն է: Հունիսի 16-18-ին նախատեսվում է Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի պետական այցը Վրաստան, հույս ունեմ, որ դրական ընթացակարգեր կունենանք, եւ կաթողիկոսը կհանդիպի նաեւ երկրի նախագահ Սաակաշվիլու, պետական այրերի հետ, իսկ վրաց պատրիարք Իլյա Երկրորդը կաթողիկոսին կուղեկցի ողջ այցի ընթացքում»:



Տարվա ընթացքում փոխադարձ այցելությունները շատ են: Հունիսին արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը, իսկ հոկտեմբերին Սերժ Սարգսյանը կայցելեն Վրաստան:

Անդրադառնալով վիրահայության խնդիրներին՝ դեսպանն ասաց, որ դրանք հիմնականում կրթական եւ մշակութային ոլորտներին են վերաբերում: Կան խնդիրներ նաեւ տնտեսական եւ սոցիալական բնագավառում:

«Սակայն պետք է արձանագրել, որ տնտեսական եւ սոցիալական ոլորտն ավելի շատ վրաց պետության սոցիալական քաղաքականության մտահոգություններն են, թեեւ ՀՀ-ին եւս դա մտահոգում է: Մյուս բլոկն ավելի շատ է գտնվում ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում, տարբերաբար հարցերը քննարկվում են, եւ պատրաստ դաշտ կա խնդիրների արդյունավետ լուծման համար»:

Թեպետ դեսպանն արդեն երկու ամիս է Վրաստանում, սակայն չի հասցրել այցելել Ջավախքի հայկական դպրոցները: Կրթության հարցը վիրահայության ամենացավոտ հարցերից է: Այնուամենայնիվ, Մանուկյանը լիահույս է, որ 1.5 ամիս առաջ հայոց լեզվի դասաժամերի ավելացման մասին համաձայնությունն առաջիկայում կյանքի կկոչվի:

Ջավախքում դպրոցականների հետ զրույցի ժամանակ պարզեցինք, որ Ջավախքի հայկական դպրոցներում հայոց պատմության դասագրքեր չկան, միայն եզակի բարեխիղճ ուսուցիչների շնորհիվ է, որ վիրահայերի շատ նվազ հատվածը ծանոթանում է հայոց պատմությանը:

Խնդրի առնչությամբ դեսպանի խորհուրդն առնվազն տարօրինակ էր:

«Հայոց պատմությունն ուսումնասիրելուն ի՞նչն է խանգարում, եթե տունը նստի եւ ինտերնետով պատմություն ուսումնասիրի: Ես երեկ Ջավախքում օգտվեցի ինտերնետից, վատը չէր», ասաց դեսպանը:

«**Ազգ**»-ի հարցը՝ ի՞նչ արժե Ջավախքում ինտերնետը, եւ կարո՞ղ է հողագործությամբ եւ անասնապահությամբ մի կերպ տուն պահող ջավախքցին հավելյալ ծախս կատարել եւ տանը ինտերնետ միացնել միայն այն պատճառով, որ վրաց պետությունն իր պարտականությունները ազգային փոքրամասնության նկատմամբ չի կատարում, դեսպանը չլսելու տվեց ու չպատասխանեց:

**ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Ջավախք-Երեւան**

# Վ. Սողոմոնյանը՝ Քոչարյանի ընդդիմախոսներին

Ռոբերտ Քոչարյանի գրասենյակի ղեկավար Վիկտոր Սողոմոնյանը, հարցազրույց տալով «Մեդիամաքսին», մի քանի հետաքրքրական անդրադարձներ է արել: Անդրադառնալով Պուտին-Քոչարյան հանդիպմանը, որի վերաբերյալ լուրը մի փոքր ավելի ուշ հերքվել էր, հետո նորից հաստատվել, իսկ Արտաշես Գեղամյանն էլ տեղական կայքերից մեկում տեղադրված հոդվածի վերաբերյալ հղում էր արել դեպի Քոչարյանի գրասենյակ՝ թե պատվեր է, Սողոմոնյանն ասել է. «Անկեղծ ասած, ես արդեն վաղուց սովորել եմ նման ռեակցիային՝ կապված Ռուսաստանի վարչապետի եւ Ռոբերտ Քոչարյանի հանդիպումների հետ: Ինձ նույնիսկ չզարմացրեց ձեր հիշատակած «լուրը», չնայած զարմանալու համար առիթը լուրջ էր: Վերջ ի վերջո, մայիսի 24-ին ինքս եմ ուղեկցել նախագահ Քոչարյանին Նովո Օգարյովո եւ ներկա եմ գտնվել այդ հանդիպման սկզբին եւ վերջին: Կարող եմ միայն ափսոսանք հայտնել այդ հիստերիայի առիթով: Ինձ միշտ թվացել է, որ երկու բարեկամ երկրների նախկին նախագահների միջեւ բարեկամական հարաբերությունների պահպանման հարցը (հատկապես Հայաստանի եւ Ռուսաստանի դեպքում), ինչպես նաեւ նրանց տարբերական հանդիպումների մասին հաղորդագրությունները, կարող են միայն հպարտության եւ լավատեսության առիթ դառնալ: Բայց, ինչպես պարզվեց, մեզ մոտ դա այլ կերպ են ընկալում: Կարծում եմ, որ այդ քարոզչական «հնարքների» հեղինակները պետք է փորձեն գոնե մեկ անգամ «իջնել սեփական զանգակատնից» եւ որոշ իրադարձություններին նայեն ազգային շահերի եւ ոչ թե նեղ անձնական հաշվարկների եւ մանր ինտրիգների տեսանկյունից: Համոզված եմ, այդ ժամանակ նրանք ստիպված չեն լինի հրապարակային հիստերիա տարածել եւ ավելորդ փողեր ծախսել պատվերով հոդվածների վրա: Ինչ վերաբերում է պ-ն Գեղամյանին, ապա, ամենայն հավանականությամբ, նա ղեկավարվում է այսպես կոչված «դավադրության տեսությամբ», փորձելով քանդել գլոբալ եւ գաղտնիքների շղարշով պատված ինչ-որ քաղաքական խաղերի թելերը՝ հիմնվելով մեկ ինտերնետ-աղբյուրի մեկ հոդվածի վրա: Ստիպված եմ հիասթափեցնել պ-ն Գեղամյանին. պատվերով հոդվածը մեր գործելաոճը չէ: Դուք հաստատ շփոթել եք հասցեն»: Անդրադառնալով համաներմանը եւ նախ ողջունելով այն՝ Սողոմոնյանը նաեւ ասում է. «Ինձ փոքր-ինչ մտահոգեց այլ փաստ. քաղաքական գործիչների եւ ԶԼՄ-ների մի ամբողջ շարք համաներումը ներկայացրեց որպես «աննախադեպ իրադարձություն», իսկ քաղբանտարկյալների ազատ արձակումը՝ որպես «Քոչարյանի ժառանգության հաղթահարմանն ուղղված հերթական քայլ»: Այս պնդումները զարմացնում են: Առաջինը, անկախության ձեռքբերումից հետո մեր պետությունն արդեն մի քանի անգամ համաներում է հայտարարել (եթե չեմ սխալվում, այս համաներումը 7-րդն է): Ռոբերտ Քոչարյանի ղեկավարության տարիներին համաներում է հայտարարվել երեք անգամ՝ 1998, 2001 եւ 2006թթ: Այնպես որ, ոչ մի աննախադեպ բան, բնականաբար, չկա:

Ինչ վերաբերում է «հաղթահարմանն ուղղված հերթական քայլին», ապա ստիպված եմ հիշեցնել, որ 1998-2007թթ. Հայաստանի Հանրապետությունում ոչ մի քաղբանտարկյալ չի եղել: Դա հանրահայտ փաստ է: Վերջերս ազատ արձակված քաղաքական գործիչները տարբեր ժամկետների ազատազրկման են դատապարտվել 2008 թվականի ապրիլից հետո: Այնպես որ, որեւէ «ժառանգության» եւ առավել եւս՝ դրա «հաղթահարման» մասին խոսք լինել չի կարող»:

ՀԱԿ-իշխանություն երկխոսությանը Ռոբերտ Քոչարյանի վերաբերմունքի մասին ՀՀԿ-ական Արտակ Դավթյանի հղումը, թե ծանոթացեք Տեր-Պետրոսյանի ելույթին, եւ ՀԱԿ-ից Սուրեն Աբրահամյանի ասածը, թե Քոչարյանը ոչ թե խանդում, այլ սարսափում է այդ երկխոսությունից, արժանացել են Վ. Սողոմոնյանի հետեւյալ գնահատականին. «Չեմ կարող հիշել, որ երբեւէ ՀՀԿ անդամները վկայակոչեին Տեր-Պետրոսյանի ելույթը՝ սեփական դիրքորոշումն արտահայտելու համար: Դա, երեւի թե, «ժամանակակից-երկխոսական» քայլ է, որը, մեղմ ասած, պատիվ չի բերում ՀՀԿ ներկայացուցչին: Ինչ վերաբերում է Աբրահամյանին, ապա, իմ կարծիքով, մարդկանց արդեն վաղուց պարզ է, թե ով եւ ինչից է «սարսափում»: Դրա ամենալավ վկայությունը ՀՀՇ-ականների հիստերիկ ռեակցիան է նախագահ Քոչարյանի ոչ պաշտոնական կայքին (այդպիսի կայք է բացվել-Մ.Խ.) եւ Ռուսաստանի վարչապետի հետ նրա հանդիպումներին, ինչի մասին ես արդեն ասացի», ասել է Վ. Սողոմոնյանը:

**Մ. Խ.**

*ԱՆԴՐԱԴԱՐՁ ՄԵՐ ՏՊԱԳՐԱԾԻՆ*

# Պարզաբանում արդարադատության նախարարությունից

**«Ազգ» օրաթերթի «Նոտարական նոր սակագները դարձյալ սանդղակով» հրապարակման մեջ տեղ են գտել նոտարների ծառայությունների սակագներին վերաբերող մի շարք հարցադրումներ, որոնք հուզում են մեր հանրությանը: Մի կողմից, հաշվի առնելով քաղաքացիների արդարացի դժգոհությունը նոտարական ծառայությունների որակի եւ ապօրինի վճարների գանձման վերաբերյալ, հարցադրումների համատեքստն ընկալելի է եւ տեղին: Մյուս կողմից, ակնհայտ է, որ արդարադատության նախարարության նպատակային բարեփոխումները միտված են հենց այդ դժգոհությունների նվազեցմանն ու կանխմանը: Այդ առումով բոլորովին անհասկանալի է լուրջ մասնագիտական վերլուծությունների փոխարեն՝ փորձել հռետորական հարցադրումների միջոցով հանրության մեջ պատրանք ստեղծել, որ նախարարության նոր ղեկավարությունը միայն նոտարների համար շահավետ պայմաններ է ապահովում, որ խոսքը գործից տարբերվում է, որ ոչինչ չի փոխվել սակագների միջակայքերի առումով: Անընդունելի է նաեւ արհեստական հակասություններ որոնելու ձգտումն այն դեպքում, երբ հնարավոր էր ստանալ պարզ բացատրություններ նախարարության՝ հրապարակման մեջ հիշատակված պատասխանատու պաշտոնատար անձանցից:**

**Հարկ է հիշեցնել, որ նոտարական ծառայությունների ոլորտում ոչ թե միայն եւ բացառապես միջակայքի առկայությունն է խնդիր հարուցել, այլ հատկապես եւ առավելապես ծառայության սանդղակի վերին շեմը բազմակի գերազանցող ապօրինի վճարների գանձումը որոշ նոտարների կողմից: Հանրության համար այս հանգամանքն էր, որ տեղիք էր տալիս տարակուսելու նոտարի կողմից իր լիազորությունների համարժեք կատարման հարցում:**

**Կառավարության հաստատած, բայց դեռեւս ուժի մեջ չմտած որոշմամբ ակնհայտորեն փոփոխվել է առավելագույն սակագնի վերաբերյալ սակագների սահմանման եւ գանձման ամբողջ հայեցակարգը:**

**Վերացվել է բարդ գործարքի հասկացությունը, որի քողի ներքո կարելի էր սովորականից էապես ավելի բարձր վճար գանձել անգամ ամենապարզ գործարքների վավերացման համար: Սակագները պետք է փակցված լինեն նոտարական գրասենյակներում՝ ի տես բոլոր այցելուների: Այդքան չարչրկված միջակայքերը էապես կրճատվել են, հավելյալ տեխնիկական ծառայությունները ներառվել սակագների մեջ: Իսկ թե ինչու այդ միջակայքերն ամբողջովին չեն վերացվել, նույնպես ունի պարզ բացատրություն: Խնդիրն այն է, որ անկախ այն հանգամանքից, թե բոլոր նոտարները թե ոչ, կան էական օբյեկտիվ գործոններ, որոնք խոչընդոտում են համընդհանուր, միատեսակ չափերի կիրառմանը բոլոր հնարավոր դեպքերում՝ առանց հաշվի առնելու կոնկրետ գործի բարդությունը, մատուցվելիք նոտարական ծառայության ծավալը, դրա որակական տարբերակման անհրաժեշտությունը, նոտարական գրասենյակի աշխատողների կողմից քաղաքացիներին սպասարկելու մակարդակը եւ այլն:**

**Այսպես՝ «Նոտարի կողմից մատուցվող վճարովի ծառայությունների սակագները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման մեջ նոտարների վճարովի ծառայությունների դիմաց գանձվող վճարների համար նվազագույն աշխատավարձի նկատմամբ գործակցի ստորին եւ վերին շեմ նախատեսելը հնարավորություն կընձեռի նոտարին յուրաքանչյուր գործարքի վավերացման համար գանձել ծառայության վճար՝ հաշվի առնելով գործարքի առանձնահատկությունները: Օրինակ՝ ժառանգության իրավունքի վկայագիր տալու համար մի դեպքում նոտարը պետք է ստուգի միայն մեկ ժառանգի իրավունքներն ու ազգակցական կապը հաստատող փաստաթղթերն ու դրանց իսկությունը, իսկ մյուս դեպքում՝ մի քանի ժառանգների իրավունքներն ու ազգակցական կապերը հաստատող փաստաթղթերը եւ դրանց իսկությունը: Լինում են դեպքեր, երբ ժառանգություն ստանում են նաեւ ներկայացման կարգով:**

**Ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիր տալու համար նոտարը պետք է ստուգի նաեւ պարտադիր բաժնի իրավունք ունեցողների իրավունքները: Անշարժ գույքի օտարման պայմանագրերը վավերացնելիս մի դեպքում կողմերը կարող են լինել ֆիզիկական անձինք, մեկ այլ դեպքում՝ արտասահմանյան ներկայացուցչություններ: Գրավի պայմանագրեր վավերացնելիս որոշ դեպքերում կողմը ներկայացնում է ոչ թե մեկ, այլ մի քանի միավոր գույք, եւ նոտարը պարտավոր է ստուգել դրանցից յուրաքանչյուրի նկատմամբ կողմի իրավունքները:**

**Վերը նշված յուրաքանչյուր դեպքում նոտարը կատարում է տարբեր ծավալի եւ բարդության աշխատանք: Համաձայն Հայաստանի Հանրապետության «Նոտարիատի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին կետի՝ նոտարը Քաղաքացիական օրենսգրքով սահմանված գույքային պատասխանատվություն է կրում իր կողմից դիտավորությամբ թույլ տրված խախտումների հետեւանքով նոտարական գործողությունների համար դիմած անձանց պատճառված վնասի համար: Հետեւաբար նոտարը պետք է հնարավորություն ունենա որոշելու իր կողմից մատուցվող վճարովի ծառայությունների դիմաց գանձվող վճարների համար նվազագույն աշխատավարձի նկատմամբ գործակցի ստորին եւ վերին շեմի սահմաններում ծառայության չափը:**

## Հեղինակի կողմից

Դրական եւ անգամ օրինակելի մոտեցում է, որ արդարադատության նախարարությունն իր պարզաբանումներն է ներկայացրել հանրությանը մեր հրապարակման մեջ նշված խնդրի՝ նոտարական ծառայությունների սանդղակը պահպանելու վերաբերյալ: Հիշեցնենք, որ այդ նույն հրապարակման մեջ անհրաժեշտ էինք համարել, որ նման պարզաբանումներ վարչապետի եւ նախարարի կողմից ներկայացվեն: Սակայն անընդունելի ենք համարում նախարարության որոշ մեկնաբանություններ:

Առնվազն տարօրինակ է, թե նախարարությունը որտե՞ղ տեսավ մեր կողմից «հռետորական հարցադրումների միջոցով հանրության մեջ պատրանք ստեղծել, որ նախարարության նոր ղեկավարությունը միայն նոտարների համար շահավետ պայմաններ է ապահովում, որ խոսքը գործից տարբերվում է, որ ոչինչ չի փոխվել սակագների միջակայքերի առումով»: Ինչ մնում է «հռետորաբանության», «պատրանք ստեղծելու», «արհեստական հակասություններ որոնելու» մասին նախարարության պիտակավորումներին, ապա սահմանափակվենք ասելով, որ դա հավանաբար բնորոշ է իրավագիտական կրթություն ունեցող նախարարության ղեկավարների համար: Այժմ ըստ էության:

Կցանկանայինք հիշեցնել, որ ինչպես մինչ վերոնշյալ հրապարակումը, այնպես էլ դրանից հետո, մեր թերթում, նույն հեղինակի կողմից, մի քանի անգամ ներկայացվել են կառավարության եւ արդարադատության նախարարության կողմից նոտարական ոլորտում իրականացված բարեփոխումները (այդ թվում նաեւ վերոնշյալ պարզաբանման մեջ նշված), դրանց դրական նշանակությունը այս ոլորտում ապօրինությունների վերացման համար:

Սակագների սանդղակի պահպանման մասին վերոնշյալ հոդվածում մեր զարմանքն էինք հայտնել առ այն, որ սակագների միջակայքի վերացման մասին հստակ շեշտել էին վարչապետն ու արդարադատության փոխնախարարը, բայց դրանք պահպանվել էին: Բնական է, որ հարց պետք է առաջանար, թե ինչո՞ւ: Ի դեպ, ի տարբերություն արդարադատության նախարարի եւ փոխնախարարի, այս առթիվ վարչապետ Տիգրան Սարգսյանը կառավարության նիստում իր ուրախությունը հայտնեց, որ «զանգվածային լրատվական միջոցներն ուշադրությամբ հետեւում են մեր հայտարարություններին եւ մեր կայացրած որոշումներին եւ բացահայտում են շեղումները»: Թերեւս առավել քան օբյեկտիվ է ասված, եւ ավելացնելու ոչինչ չի մնում:

Իսկ սակագների սանդղակի պահպանման առնչությամբ մեր տեսակետը անփոփոխ է՝ այս ոլորտում մրցակցություն չի լինի, քանի որ նոտարների թիվը սահմանափակ է եւ նրանք շարունակելու են միմյանց հետ պայմանավորվելով, սանդղակի ամենաբարձր գինը պահանջել: Այսինքն, վարչապետի մատնանշած նորմատիվային փոփոխությունների անհրաժեշտությունը մի քանի ամիս անց, այնուամենայնիվ, առաջանալու է:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Կոտրված տաշտակի մասին, կամ ինչպես են փորձում հային համոզել, որ նա հայ չէ

Այս տարվա մարտի 12-ին ռուսերեն լեզվով հրատարակվող «Էլիտարնայա գազետա» (ամենամսյա «Նովոյե վրեմյա» թերթի ներդիր) էջերում տպվեց մի մեծ հոդված՝ «Ուրարտներ՝ ովքե՞ր են, որտեղի՞ց են նրանք»: Հոդվածագիրը՝ Ալիս Կոստանյան: Թվում է՝ «նոր ժամանակ» է, նորույթ պետք է լսենք՝ ի թիվս վերջերս հայտնաբերված հնագույն կոշկի, գինեգործության, կտորի, որի նախշերը այսօր էլ օգտագործում ենք, եւ որոնք 6-7 հազար տարվա հնություն են, բայց «նոր» ենք գտնում, ուրիշ նորույթներ պիտի կարդանք-լսենք: Չխալվենք, այդպես չէ: Հոդվածագիրը փորձում է համոզել մեզ, թե հայկական մշակույթը հայկական չէ, հայերը եկվոր են, Սասունցիք հայ չեն, լեզուն հայերեն չէ, մեր Պարույր արքան հայ չէ եւ այլն, կարճ ասած՝ մենք մենք չենք, այլ ինչ-որ ուրարտներ: Այո, նոր չէ, հին շաղակրատանք է: Սովետական ժամանակներում «ուրարտական» դրույթը «անհրաժեշտ» էր, որովհետեւ ինչպե՞ս կարելի էր թույլ տալ, որ ինչ-որ փոքրիկ Հայաստան հանկարծ դառնա հսկա տարածքի ամենահին երկիրն ու ժողովուրդը: Ըստ Սովետի սովորության, պատմությունը «կառուցեցին», որոշ գիտնականների պատվիրեցին գրքեր, ոմանց՝ գիտական աստիճաններ, ոմանց վրա մաս թափ տվեցին՝ մտածել անգամ չհամարձակվեք, ոմանց էլ պարզապես նստեցրին: Սակայն բուն պատմությունը ուրիշ է:

Նախանցյալ եւ անցյալ դարերում Վանի շրջանում հայտնաբերվեցին սեպագրեր, մի մասը՝ աքքադերեն, մյուս մասը անծանոթ լեզվով: Սկզբից դա անվանեցին Վանի լեզու, պետությունը՝ Վանի պետություն, երկիր: Գրությունները աքքադերեն կարդալով այդ անհայտ լեզուն, այդ հնչողությամբ էլ պայմանականորեն անվանեցին Ուրաատրի կամ Ուրարտու: Այդ լեզվի ուսումնասիրողներից մեկը՝ Յոհան Ֆրիդրիխը, զգուշացրեց, որ իր գործածած «Ուրարտու» բառը խիստ պայմանական, ժամանակավոր մի անուն է [1] (էջ 51): Չնայած զգուշացմանը, հետագայում պետությունը անվերապահորեն անվանվեց Ուրարտու, լեզուն եւ մշակույթը՝ ուրարտական: Սովետական ժամանակների համար դա շատ հարմար էր, բայց գիտության համար՝ շատ տարօրինակ: Դա ի՞նչ երկիր է, որ երեք հարյուր տարով ընդմիջում է Հայոց պատմությունը, բայց որի մասին ոչ հունական, ոչ եբրայական, ոչ հայկական աղբյուրներում ոչինչ չի ասվում:

Աստվածաշնչում հիշատակվում է, որ Նոյի տապանը հանգրվանեց Արարատ լեռան վրա, իսկ գերդաստանը տեղավորվեց ստորոտում: Հայտնի է, որ հետագայում նրա որդի Սեմը իր գերդաստանով հեռացավ Պաղեստինի շրջան, որդի Քամը իր գերդաստանով՝ Աֆրիկայի հյուսիսային մաս՝ Լիբիա եւ Եգիպտոս, որդի Հաբեթը մնաց նույն տեղում՝ գերդաստանով հանդերձ: Նշենք, որ XVII-րդ դարում Մ. Խորենացու «Հայոց պատմությունը» տպագրված է «Հաբեթյան ցեղի պատմություն» վերնագրով [2]: Աստվածաշնչում՝ Բաբելոնին վերաբերող մասում նշվում է, որ Նոյի սերունդը արեւելքից եկավ եւ բնակվեց Սենար երկրում:

Հ. Ֆլավիոսը [3] տեղեկացնում է, որ նրանք Սենար հարթավայր իջան լեռներից, եւ որ Սենարը Սումերն է: Որ Արարատը գտնվում էր Սումերից հյուսիս, չպետք է թվա հակասություն, որովհետեւ հնագույն աղբյուրներում Արարատը եւ Արարատյան թագավորությունը՝ Արատտան, բացի նրանից, որ համարվել է անմահների երկիր, սուրբ եւ աստվածների երկիր (Գիլգամեշը եւ անմահների երկիրը) [4, 5], աստվածների ժողովի երկիր (կամ «լեռ», սումերերեն «լեռ» եւ «երկիր» նույնական են) [6], նաեւ արեւածագի երկիր: Ղ. Ալիշանը եւս նույնն է նշում (տես [7]):

«Սասնա ծռեր» էպոսում, երբ Ծովինարը որդիներին ուղարկում է Հայաստան, նույնն է ասում՝ «հարցուցեք Արեւելքից թագավորի երկիրը»: Այսինքն հինմիջագետքյան պատկերացումները Հայաստանի մասին՝ արեւի ելման վայր էր՝ արեւելք իմաստով (ոչ տեղայինի իմաստով):

Մեզ՝ հայերիս ուրիշ անվանում էլ են տալիս՝ արմեններ, երկիրը՝ Արմենիա, հին պարսկերենով (մարապարսկական ըմբռնումով) երկիրը անվանվել է Արամանիա կամ Արմնիա, որը նույնանում է՝ ասուր-բաբելական Արմանի-Արամանի, հետագայում Նաիրի-Նաիրի (գետերի երկիր): Հայքի այս անվանումը Պարսկաստանից անցել է Հունաստան, հետագայում Եվրոպա: Այն ծագում է հայկական լեռնաշխարհի հարավարեւմտյան մասում ընկած հնագույն Արմե կամ Արամե քաղաք-երկրի անունից (այստեղ արտասահմանյան եւ հայ գիտնականների կարծիքով «ար»-ը հիմքն է, ար-եվ կամ ար-արիչ՝ աստված,- հետագա քննության հարց է): Ասուրները, ելնելով տեղացիների էթնիկական նկատառումներից, ավելի ուշ սկսեցին անվանել համարյա այնպես, ինչպես հեթական (հեթիթական կամ խեթական, հեթ կամ հաթ) սեպագիր արձանագրություններում՝ Հայասա, բայց մի քիչ ասուրացված ձեւով՝ Ույայիս կամ Հայայիս, նման՝ հայ կամ Հայք [8] (էջ 24-28): Պատմահոր վկայությամբ [2] (գիրք I գլ. ԺԴ) Հայաստանում III հազարամյակի վերջին եւ II հազարամյակի սկզբում ունեցել ենք Արամ թագավոր եւ նրա որդի Արա Գեղեցիկ: Որ դա առասպել չէ, կարելի է տեսնել Լ. Միրիջանյանի մոտ [9]: Նա էլ նշում է, որ Պատմահայրն է առաջինն ասել, թե հարեւան ազգերը, «որպէս ամենացուն յայտնի է», մեր երկիրն անվանել են Արամի անունով՝ ի պատիվ նրա անօրինակ հերոսությունների, ինչպես առաջուց անվանվել էր Հայկ Նահապետի անունով՝ Հայք: Մ. Գավուքճյանը ցույց է տալիս, որ Արմանի երկիրը նշված էր արդեն աքքադական Սարգոն Ա-ի ժամանակներում (մ.թ.ա. 1980-1948թ.թ.) [10]: Այսինքն՝ ժամանակային տեսանկյունից Պատմահոր եւ ուրիշ աղբյուրները համընկնում են: Նույն աղբյուրում [10] Մ.Գավուքճյանը նշում է, որ ի. Դյակոնովը իրեն գրած մի նամակում ընդունում է եւ հավասարազոր է համարում Arme = Armanium-ը: Մյուս կողմից նա ցույց է տալիս, որ Արամ անունը չի պատկանում հետագայում արամեացի (լեզուն արամեերեն) կոչված սեմիթներին, որոնք նախապես կոչվել են «Սոթու» ր «Ահլամե»: Այս վաչկատուն, քոչվոր ցեղախմբերը, գալով կործանված Արամյան Միտանի քաղաք-երկրի հողերի վրա կամ տեղավորվելով մոտակայքում, երկրի անունով իրենց կոչեցին արամեացիներ, այնպես, ինչպես եգիպտացի անունը չի պատկանում արաբներին [10] (էջ 45):

Լ. Շահինյանը ճշտեց եւ նշեց ([11] (էջ 49), որ պետք է հայերեն հնչի Արմնիք կամ Արամանիք: Այժմ վերադառնանք «Ուրարտու»-ին: Ինչպես նշվեց, չնայած Լ. Ֆրիդրիխի զգուշացմանը, հայտնաբերված սեպագրերը կարդացվեցին աքքադերեն (պատկանում է սեմական լեզվախմբին), նույն հնչողությամբ էլ անվանեցին երկիրը: Աքքադական սեպագրերը վանկային են, կան պայմանանշաններ եւ գաղափարագրեր, որոնցից ամեն մեկը կարող է մի ամբողջ հասկացություն լինել: Սխալ կարդացվածը դարձավ նոր լեզու, շատ բան մնաց չըմբռնված, որոշն էլ հետագայում փոփոխվեց: Է. Խուրշուդյանը նշում է, որ սեպագրում «հ» հնչյուն գոյություն չունի, փոխարենը գործածվում է «խ» կամ ոչինչ: Նկատի առնելով ա > ու հնչյունափոխությունը, նշում է սեպագիր արձանագրություններում «հարի» կամ «արի» կարդացված անվանումը հետագայում, չգիտես ինչո՞ւ, փոխվեց «խուրի» [12] (էջ 51): Ա. Մովսիսյանը նշում է, որ «Ուրարտուն» Աստվածաշնչի Արարատն է: Աստվածաշնչի հին ասուրական «Պեղոտտա» կոչվող թարգմանության մեջ Արարատը փոխարինվել է «Կարդու» տեղանվամբ, որը բաղկացած է երկու մասից՝ ki եւ ardu: ki-ն սեպագրության մեջ նշանակել է «տեղ», «երկիր»: Նույն նշանակությունն ունի նաեւ «Ուրարտու»-ի «ur» սկզբնավանկը: Բուն տեղանունն է artu կամ ardu, որը այլ բան չէ, քան Արատտա տեղանվան ժամանակի ընթացքում փոփոխված տարբերակը:

Արատտան՝ նշված ուշ սումերա-աքքադական բնագրերում, հանդիպում է Arata կամ Aratu տարբերակներով: Դրանց ավելացնելով «տեղ, երկիր» նշանակող ur-սկզբնավանկը, կստանանք Urarata եւ Uraratu: Uraratu-ն երկրորդ a-ի սղումով վերածվել է Ուրարտուի: Եսայի մարգարեի մարգարեության Կումրանյան ձեռագրերում Արարատը հիշատակվում է Ուրարատ (hwrrt) ձեւով [5] (էջ 31):

Ահա «Ուրարտու» եւ «ուրարտերեն» մտացածին պետության եւ լեզվի գաղտնիքը՝ Արարատյան թագավորության եւ հայերեն բարբառ լեզու: Նույնիսկ Բ. Պիոտրովսկին այդ երկիրը անվանել է Վանի թագավորություն [13]:

Դեռեւս 1933թ. պրոֆեսոր Ա. Խաչատրյանը [14], ուսումնասիրելով սեպագիր արձանագրությունները, հաստատեց, որ ասորեստանյան եւ արաբական ավանդությունը հին կտակարանի Արարատ=Ուրարտու լեռը նույնացնում է նույն տեղում գտնվող Արարատի հետ (արաբերեն՝ Ջեբել Ջատի): Արարատյան թագավորությունը այդ ժամանակներում, (VII-Vդ. մ.թ.ա.) իսկապես բարձր կուլտուրայով հզոր երկիր էր, դա հայտնի էր նաեւ Եսայի մարգարեին (625-586թ.թ. մ.թ.ա.), որովհետեւ նա Աստծո բերանով այդ երկրի զորությամբ էր սպառնում Բաբելոնին՝ «Պատվեր տուք յինեն Արարատյան թագավորության եւ Ասքանազյան գնդին» (տես [13] էջ 29): Լուրջ հարված «ուրարտական տեսությանը» հասցվեց պարսկական Դարեհ Ա-ի (522-486թ.թ. մ.թ.ա.) եռալեզու, այսինքն երեք տարբեր լեզուներով փորագրված (հին պարսկերեն, էլամերեն եւ աքքադերեն) միեւնույն տեքստի արձանագրությունները Բիհիսթուն գետի մոտ, բարձր ժայռի վրա (այդպես էլ կոչվեցին՝ Բիհիսթունյան արձանագրություններ), որոնք ավելի քան 2500 տարի առաջ գրվել էին Դարեհ Ա-ի մեծարման, այդ թվում նաեւ Հայաստանում որոշ ապստամբություններ ճնշելու առիթով: Այստեղ Արարատյան թագավորությունը անվանվել է՝ պարսկերեն - Արմինիա, էլամերեն–Հարմինույա, աքքադերեն՝ Ուրաշտու: Նույն արձանագրություններում հիշվում է մի հայ մարդու մասին՝ «Արաքա նամա, Արմինիյա Հալդիտանյա պուրա» (հին պարսկերեն), որը նշանակում է «Արաքա անունով հայը Հալդի (աստծո) որդի», որտեղ Հալդին կամ Խալդին (Խալդ) մեր Հայկ Նահապետն է, որը հ...խ անցումով դարձավ «ուրարտական» սրբություն: Աքքադերեն արձանագրության մեջ նշված է urastaja, այսինքն՝ պարսկերեն Արմինիան, էլամերեն Հարմինույան, աքքադերեն Ուրաշտուն (Ուրարտուն) նույն Հայքն են, այդ մարդն էլ Հայկի ցեղից է՝ հայկազուն: Դա վերջին մեխն էր «ուրարտու» հասկացության համար, ընդ որում բերվածից բացի շատ ուրիշ փաստեր էլ կան, սակայն ինչպես տեսնում ենք, այդ կոտրած տաշտակը ստեպ-ստեպ մեզ են դեմ տալիս: Պատմության տարբեր էջերը բացելուց նման երեւույթներ դիտվում են, օրինակ՝ աֆրիկյան բանտու ցեղը համարվեց աֆրիկյան բոլոր ցեղերի նախահայր, չնայած գունային եւ կառուցվածքային տարբերություններին, առանձնապես վարկածներ չշահարկվեցին: Եբրայեցիների հավատի սիմվոլ, նախահայր (նաեւ քրիստոնյա աշխարհում) համարվում է Աբրահամը, որը քանանացի էր, եւ նրա եղբայր Ղովտը եւ կինը՝ Սառան (տես [15], էջ 107), դա նույնպես շահարկման առիթ չի դարձել, սակայն նման ճնշում հայոց պատմության վրա առնվազն վրդովեցուցիչ է (եթե ավելին չասվի): Իհարկե, ուրիշ վարկածներ էլ են փորձվել, ասենք, Հայքում շատ է կիրառվում առյուծին նմանեցնելը, առյուծ անունը, բայց Հայաստանում առյուծ չկա, ուրեմն հայերը եկվոր են: Սակայն պեղումների ժամանակ առյուծի ոսկորներ հայտնաբերեցին՝ վարկածը «մահացավ»: Կամ փորձեցին եկվորության վարկածը կապել ծիրանի հետ՝ հայերը համարում են ծիրանը տիպիկ հայկական, բայց ծիրանի հայրենիքը Չինաստանն է, կամ Տիբեթը, ուրեմն հայերը եկվոր են: Դա էլ «մահացավ», որովհետեւ պարզվեց, որ ծիրանը բնիկ հայկական պտուղ է (տես [16], էջ 226): Մյուս կողմից, իհարկե, այսօր էլ կան հայ գիտնական «ուրարտագետներ», որոնք, այսպես ասած, «ավտոպիլոտ»-ով կրկնում են իրենց ականավոր ուսուցիչների՝ Աճառյան, Մանանդյան, Ղափանցյան եւ այլն, մեծ գիտնականների կարծիքը, բայց չմոռանանք, եւ բոլոր տարեց հայերն էլ գիտեն. եթե մարդ ապրեր սովետական տխրահռչակ ԿԳԲ-ի ճնշման տակ, կամ էլ, աստված մի արասցե, մի քանի կամ տասնյակ ամիսներ անցկացներ նրա նկուղներում, կասկած անգամ չէր կարող լինել, որ նա կխոստովաներ եւ կհաստատեր, թե ինքը եւ իր նախնիները եւ իր ազգը ոչ միայն իրանյան, կիմերա-սկյութական, ուրարտական ծագում ունեն, այլեւ նույնիսկ նեգրական կամ մարսյան:

Հիշենք մի քանի հայտնի փաստ եւս: Նախ Էթիունի-Ուդորը Հայքի գավառ, Հայկական լեռնաշխարհի տեղանուններից մեկն է, Սասունը միշտ եղել է Հայկյան երկիր, այդպես անվանվել է անհիշելի ժամանակներից երկրաշարժային բնույթի լեռնային տեղանք լինելու պատճառով (սասանվող): Նրան սահմանակից էր նաեւ Աղձնիքը: Սրանք մի քանի այլ գավառների հետ միանում էին Հայքյան Սուբարի երկրի մեջ: Հետագայում Սուբարի երկրի Միտանի քաղաք-թագավորության անկումից հետո (Միտանին ժամանակին հայքյան հզոր թագավորություն էր, մեծ ազդեցություն ուներ Միջագետքի, նաեւ Եգիպտոսի վրա, որոնց փարավոնների հետ կապված էր փոխամուսնական կապերով՝ հայտնի Նեֆերտիտին Միտանիի արքայական ընտանիքից էր: Ահա որտեղից է գալիս «Սասնա ծռեր»-ի մեջ Ծովինարին «Մսրի խալիֆին» հարս ուղարկելու հնագույն հիշողությունը էպոսում: Մսր քաղաք Եգիպտոսում այսօր էլ կա [12, 14]), այդ ընդարձակ տարածքը ասուրների հարվածների տակ սկսվեց կծկվել-փոքրանալ եւ պահպանվեց Աղձնիք, Սասուն շրջանները Արմե կամ Արամե-Սուբարի (Սուբրիա) անվան տակ, որը ասուրական աղբյուրներում հետագայում կոչվեց Արմե, կամ աքքադերեն կարդալով՝ Ուրմեախա:

Ա. Վարպետյանը, ուսումնասիրելով եւ ստուգաբանելով սումերական Գիլգամեշ արքայանունը, ցույց է տալիս, որ դա աքքադական ձեւով՝ վանկային (Gis-sir-Gal), թարգմանվում է (ծին կամ սին, ծնվել կամ սնվել – շող – մեծ) [17] (էջ 97): Արգիշտ-ը կթարգմանվի Ar-Ur (ար-արիչ կամ ար-եվ), Gis-ծին, տ-ն վերջավորություն է, այսինքն՝ Արծին կամ Արսին, արքայական անուն՝ ար-ից սնված կամ ծնված (ամենայն հավանականությամբ Արսին): Նշենք, որ Մենուա-ն էլ դառնում է Մինա [8]: Հնարավոր է հետագայում հունականացվելով (ավելանում է «իս», «ոս» կամ «ս») դառնում է Մինաս: Իշպուին անունը անուն չէ, այլ կոչում [10] եւ նշանակում է մեծանուն պատգամավոր (մարգարե): Ամենայն հավանականությամբ Անուշավան սոսանվերը: Պարզ երեւում է, որ «ուրարտագետները» այն կարծիքին են, թե ինչ տեսնում, կարդում ենք, այնպես էլ պիտի հնչի, առանց հաշվի առնելու հնությունը եւ բարբառները: Այդ դեպքում զարմանալի է, թե ինչու չեն համարում, որ երկիրը տափակ է, եւ Արեւը ու աստղերը պտտվում են երկրի շուրջը, որովհետեւ առաջին հայացքով այդ ենք տեսնում: Գուցե եւ այդպես են համարում: Հայկական մշակույթը հնագույնն է (գիտնականները անվանում են Քուռ-արաքսյան, կամ Շենգավիթյան մշակույթ): Այն հզոր ազդեցություն է ունեցել ոչ միայն շրջապատի, Անդրկովկասի եւ Կովկասի վրա, նաեւ Միջագետքի շատ ցեղերի ու ժողովուրդների մշակույթի կազմավորման վրա, հասել մինչեւ Պաղեստին: Բավական է հիշենք հնագույն ժամանակներում Արարատյան թագավորությունում ձիերին վարժեցնելը եւ ձիաբուծությունը, մետաղագործությունը (պղինձ, արույր, թուջ, երկաթ-պողպատ), աստղագիտություն եւ այլն, որոնք հաստատվել են բազմաթիվ անվանի օտարերկրյա եւ հայ գիտնականների կողմից, նաեւ ապացույցները, որ Արարատյան լեռնաշխարհը, լեզուն, համարվում են հնդեվրոպական եւ հնդիրանյան լեզուների բնօրրանը: Շատ փաստեր կարելի է բերել, բայց ոչ տեղն է, ոչ էլ ժամանակը: Վերոհիշյալ հոդվածի վերաբերյալ կարելի է միայն մի բան ավելացնել՝ Ա.Վարպետյանի խոսքերը. «Արդի քաղաքական իրավիճակներում, երբ յուրաքանչյուրը ջանում է իր ծագումը ու մշակույթը արմատացնել՝ ի՞նչ փույթ, թե այլոց պատկանելության վրա, հա՞րկ է արդյոք մասնանշել, թե ում է ձեռնտու այս խավարը», ում ջրաղացին է ջուր լցնում Ալիս Կոստանյանը:

ՌԱՖԻԿ ԲԱՂԱՅԱՆ
Ֆիզիկա-մաթեմատիկական
գիտությունների թեկնածու

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

[1] Ռ.Իշխանյան. Հայ ժողովրդի ծագման եւ հնագույն պատմության հարցեր, Ե., 1988
[2] Մ.Խորենացի. Հայոց պատմություն. թարգ. Մալխասյան, Ե., 1990
[3] И.Флавий. Иудейские древности. М., 1996.
[4] С.Н.Крамер. История начинается в Шумере. М., 1965.
[5] Ա.Մովսիսյան. Հնագույն պետությունը Հայաստանում. Արատտա. Ե., 1992
[6] Ե.Քասունի. Նախահայկական Հայաստան. Բեյրութ, 1950
[7] Ա.Մովսիսյան. Սրբազան լեռնաշխարհը. Ե., 2006
[8] Ս.Այվազյան. Հնագույն Հայաստանի մշակույթի պատմությունից. Ե., 1986
[9] Լ.Միրիջանյան. Պատմության եւ առասպելի սահմանները. Ե., 1986
[10] Մ.Գաւուկճեան. Արմենիա, Սուբարտու եւ Սումեր. Բեյրութ, 1988
[11] Լ.Շահինյան. Գիրք դարերի խորքից. Ե., 1984
[12] Է.Խուրշուդյան. Արիական իմաստություն. գիրք Բ. Ե., 2003
[13] Б.Пиотровский. Ванское царство. М., 1959.
[14] Ա.Խաչատրյան. Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն. Ե., 1933
[15] Եվսեբիոս Պամփիլիոս. Ժամանակագրություն. մաս. I, 1918թ., Վենետիկ
[16] Ե.Ս.Մորիկյան. Ծիրանենու հայրենիքի հարցի շուրջը. Բնագիտության եւ տեխնիկայի պատմությունը Հայաստանում. Գիտ.աշխ. ժող. VIII. Ե., 1987
[17] Ա.Վարպետյան. Ովքեր են ի վերջո արիացիները. Ե., 1990

# Ստամբուլյան գործընթաց պաղեստինա-իսրայելական բանակցություններում

*Եթե, իհարկե, Թուրքիան հրաժարվի Գազա ուղարկել «հումանիտար» երկրորդ նավատորմիղը*

Միջազգային ասպարեզում անժխտելի է քաղաքական նախաձեռնությունների նշանակությունը, իսկ սակարկությունները անխուսափելի են: Ելնելով շահախնդիր շահագրգռություններից, կարող են միջպետական սակարկությունների առարկա դառնալ ամենաաներեւակայելի խնդիրները, նույնիսկ՝ «ցեղասպանություն» բառի օգտագործումը, ինչպես Մեծ եղեռնի պարագայում է:

Հունիսի 12-ին Թուրքիայի ազգային մեծ ժողովի ընտրություններն են: Այսինքն՝ երկիրը կանգնած է օրենսդիր եւ գործադիր իշխանությունների ճակատագիրը կանխորոշելու շեմին: Սակայն դա չի խանգարում Վաշինգտոնին, որ Գազա «ազատության նավատորմիղ» ուղարկելու երկրորդ փորձից հրաժարվելու դիմաց պաղեստինա-իսրայելական բանակցություններում Անկարայի միջնորդական առաքելության հետ համակերպվելու պատրաստակամություն հայտնի: Սա ինքնին սակարկելու պատրաստակամություն է:

Այդ մասին երեկ նշել է «Հյուրիեթ» թերթը: Նախքան թուրքական թերթում հրապարակված նյութի բովանդակությանն անդրադառնալը հիշեցնենք, որ «ազատության նավատորմիղի» միջոցով Գազա հումանիտար օգնություն հասցնելու Թուրքիայի առաջին փորձը անցյալ տարի ավարտվել էր «Մավի Մարմարա» նավի տախտակամածում 9 թուրք «ուղեւորի» սպանությամբ:

Միջադեպի համար Թուրքիայի պաշտոնապես ներողություն խնդրելու Անկարայի պահանջներին Իսրայելի կոշտ հակազդեցությունը հանգեցրել է թուրք-իսրայելական հարաբերությունների կտրուկ սրմանը: Խնդիրը, սակայն, սոսկ հարաբերությունների սրումը չէ, այլ Թուրքիայի միջազգային հեղինակության վտանգումն ու ինչպես տարածաշրջանում, այնպես էլ իսլամական աշխարհում առաջնորդողի դերի հավակնությունները:

Այս հավակնություններն ու վտանգված հեղինակությունը ստիպեցին Անկարային հանդես գալ հունիսի վերջերին այդ նույն «Մավի Մարմարա» նավի գլխավորած երկրորդ նավատորմիղը Գազա ուղարկելու պատրաստակամությամբ: Ի պատասխան Իսրայելն ի լուր աշխարհի հայտարարեց, որ այս անգամ խորտակելու է նավատորմիղի բոլոր նավերը: Ըստ երեւույթին Իսրայելի հայտարարությունը չափազանց լուրջ է, որ Վաշինգտոնը թուրք-իսրայելական ճգնաժամին միջամտելու կարիքն է զգացել:

«Հյուրիեթի» վկայությամբ՝ Վաշինգտոնը Իսրայելի հետ «Մավի Մարմարայի» միջադեպից բխող ճգնաժամը հարթելու եւ երկրորդ նավատորմիղը Գազայի հասված ուղարկելուց հրաժարվելու դիմաց պատրաստվում է Անկարային առաջարկել միջնորդություն պաղեստինա-իսրայելական բանակցություններում, ընդ որում տանտիրոջ իրավունքով: Ենթադրվում է, որ կողմերի համաձայնության դեպքում բանակցությունները կընթանան Ստամբուլում, այսպիսով կսկզբնավորվի պաղեստինա-իսրայելական հարաբերությունների նորմալացման ստամբուլյան գործընթացը:

Որքանով է իրատեսական Վաշինգտոնի այս մտադրությունը, դժվար է կռահել: Պարզապես հայտնի է, որ անցյալ շաբաթ պետքարտուղարությունը Գազա նոր նավատորմիղ ուղարկելու մտքից հրաժարվելու հարցում փորձել է համոզել թուրքական կողմին: Համոզելու այս փորձն անգամ բավական է Գազա ուղարկելու պարագայում թուրքական երկրորդ նավատորմիղը ջրասույզ անելու Իսրայելի վճռականության մասին խոսելու համար: Ակնհայտ է, որ նավատորմիղի խորտակումը վերջնականապես կպառի թուրք-իսրայելական ճգնաժամը հաղթահարելու Վաշինգտոնի բոլոր հնարավորությունները, իսկ դա ինքնաբերաբար կանդրադառնա ոչ միայն թուրք-ամերիկյան հարաբերությունների, այլեւ ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականության եւ դրա շարունակականության վրա, իհարկե՝ Թուրքիայի ծառայություններից օգտվելու առումով:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

# Հիջաբն ու ալկոհոլը՝ Իլհամ Ալիեւի մոտ

Աշխարհի «ամենակրակասեր» երկիր Ադրբեջանը, որն, ինչպես գիտենք, «անհայտ լեզվից» թարգմանաբար նշանակում է «կրակների երկիր», առանձնահատուկ է մի շարք առումներով: Օրինակ, լինելով ՄԱԿ-ի անդամ, ավելին՝ ձգտելով ընտրվել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում որպես ժամանակավոր անդամ, այդ երկիրը նաեւ կրկնապատկում է իր ռազմական բյուջեն, իրականացնում ռազմական գույքի ու զինատեսակների գնման գործարքներ, եւ սպառնում ունեցած խնդիրները լուծել պատերազմի միջոցով: Միջազգային Euronews հեռուստաընկերության գովազդային հոլովակում ներկայանում է որպես հյուրընկալ, խաղաղասեր, զբոսաշրջիկների համար հետաքրքրական երկիր, սակայն սպառնում է ոչնչացնել քաղաքացիական ինքնաթիռներ, իսկ իր տարածքում ապրող ազգային փոքրամասնությունների ակտիվ ներկայացուցիչներին՝ «թմրամոլության» հոդվածով նետում բանտեր:

Այս զուգահեռները դեռ երկար կարելի է շարունակել՝ հասնելով ընդհուպ քաղաքական հարցերին: Ասենք, եթե «Բաքուն երբեք չի ճանաչի ԼՂ-ի անկախությունը», ապա նույն Բաքվի եւ ՄԱԿ-ի կողմից չճանաչված Թայվանի ապրանքաշրջանառությունը զգալի տոկոսներ է կազմում, չճանաչված Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետությունում էլ աշխատում է Ադրբեջանի ներկայացուցչությունը: Բացի սրանից՝ մի կողմից Իսրայելին համարելով ռազմավարական դաշնակից, Բաքուն առանձին պետական փաստաթղթերում նշում է «Պաղեստինի պետություն» ձեւակերպումը:

Այնպես որ հարեւան երկրում, որքան էլ տարօրինակ հնչեն այս խոսքերը՝ եթե մի բան չի կարելի, չի նշանակում, որ այդ նույն բանը չի կարելի... Նայած, թե ինչպես կորոշի Իլհամ Ալիեւը:

Վերջինս ի դեպ՝ անցած օրերին բավական ուշագրավ արկածների մեջ է ընկել: Ինչպես գիտենք, ինչպես Հայաստանի, այնպես էլ Ադրբեջանի նախագահները հունիսի 2-ին Իտալիայի նախագահ Ջորջիո Նեապոլիտանոյի հրավերով Հռոմում էին՝ մասնակցելու Իտալիայի միավորման 150-ամյակին նվիրված միջոցառումներին: Նույն օրերին, սակայն, Իտալիայի մեկ այլ քաղաքում՝ Վենետիկում բացվել էր բիենալեն: Անշուշտ, նորահայտ, ոչ մեկին ծանոթ երկրի հավակնոտ ղեկավարը չէր կարող չմասնակցել նաեւ այդ միջոցառմանը եւ հերթական անգամ չօգտագործել առիթը՝ ցույց տալու իր երկիրն ու նրա «բազմադարյան մշակույթը»: Ի դեպ, Վենետիկի բիենալեին ընդունված չէ երկրների առաջին դեմքերի մասնակցությունը, բայց դե մենք գործ ունենք Ադրբեջանի առաջին դեմքի հետ: Ինչեւէ՝ eurasia.org կայքի հոդվածագիրը անդրադարձել է այս իրադարձությանը՝ Ալիեւի այցելությունը պայմանավորելով այն հանգամանքով, թե «Ադրբեջանը վերջերս խիստ զբաղված է ազգային մշակույթի զարգացմամբ», իհարկե՝ առանց որեւէ հեգնանքի: Բիենալեում, ըստ վերոհիշյալ հոդվածագրի, Ադրբեջանի տաղավարում ներկայացված է եղել Այդան Սալախովայի «Ազգականներ՝ Բաքվից» խորագրով մարմարե քանդակը: Սեւ մարմարից պատկերված 5 կանանց դեմքերը ծածկված են եղել սպիտակ հիջաբով: Ալիեւի այցից հետո, ինչպես նշում է հոդվածագիրը, այս քանդակն ամբողջությամբ ծածկել են սպիտակ սավանով ու հեռացրել տաղավարից: «Նախագահ Ալիեւը պահանջել է հեռացնել իրեն իսլամիստական թվացած էքսպոզիցիան», գրում է հոդվածագիրը: Իհարկե, ինչ Ադրբեջանում արգելվեց դպրոցականներին հիջաբ կրել, այդ երկիրը «անմիջապես» դարձավ աշխարհիկ պետություն եւ իրեն չի կարող թույլ տալ ներկայանալու հպատակ կնոջ կերպարանքով: Հասկանալի է հոդվածագրի եզրակացությունը՝ «Ադրբեջանի աշխարհիկ պետության ղեկավարը փակեց քանդակը փարաջայով, որովհետեւ հենց փարաջան իրեն դուր չեկավ: Փաստորեն ադրբեջանական տաղավարի հանդիսավոր բացումը վերածվեց տաղավարի հանդիսավոր փակման, իսկ նշելու համար խմիչք այդպես էլ չլցվեց, քանի որ, չնայած Ադրբեջանը աշխարհիկ պետություն է, ալկոհոլը Ալիեւի մոտ արգելվում է»: Իհարկե, այստեղ էլ առանց որեւէ հեգնանքի...:

Հ. ԱՓՅԱՆ

# Ձերբակալվել է ՌԴ գլխավոր զինվորական բժիշկը

Մոսկվայի կայազորի զինվորական դատարանի կարգադրությամբ ձերբակալվել են ՌԴ պաշտպանության նախարարության գլխավոր ռազմաբժշկական վարչության պետ, գեներալ-մայոր Ալեքսանդր Բելեւիտինը եւ 2-րդ վարչության պետ, գնդապետ Ալեքսեյ Նիկիտինը: Այդ մասին հաղորդում է Ինտերֆաքս գործակալությունը:

Բելեւիտինը եւ Նիկիտինը կալանքի տակ կմնան մինչեւ օգոստոսի 1-ը: Նրանց կասկածում են 4,7 մլն ռուբլի կաշառք ստանալու մեջ: Դատարանը հրաժարվել է նրանց բաց թողնել խոշոր գրավների դիմաց:

Երկու կասկածյալների ստացած կաշառքը վերաբերում է 120 մլն ռուբլիանոց մագնիսառեզոնանսային տոմոգրաֆի մատակարարմանը: Ենթադրվում է, որ Հնդկաստանի մի քաղաքացուց՝ «Դին Ինթերնեյշընըլ» բժշկական ֆիրմայի ներկայացուցչից ստացած 4,7 մլն ռուբլու դիմաց երկու կասկածյալները պետք է գնեին հենց այդ ֆիրմայի տոմոգրաֆը:

Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ Բելեւիտինը եւ Նիկիտինը քննարկել էին կաշառքը ստանալիս միջնորդին սպանելու հարցը: Խոսքը ՌԴ առողջապահության նախկին փոխնախարար Ալեքսանդր Վիլկենի մասին է, որը նույնպես մեղադրվում է բուժսարքավորումների մատակարարումների հետ կապված կաշառակերության մեջ:



# Մեիր Դագան. «Իրանին հարվածելը աղետաբեր կլիներ»

«Մոսադի» նախկին պետ Մեիր Դագանը դեմ է արտահայտվել Իրանին ռազմական հարված հասցնելուն: Նրա խոսքերով, նման միջոցի կարելի է դիմել միայն ծայրահեղ դեպքում, եթե իրանական միջուկային ծրագիրը կանգնեցնելու մյուս բոլոր փորձերն ապարդյուն անցնեն:

Թել Ավիվի համալսարանում կազմակերպված կոնֆերանսում ելույթ ունենալով՝ Մեիր Դագանը ասել է, որ եթե Իսրայելը ռմբակոծի Իրանին, ապա վերջինս հիանալի առիթ կունենա ակտիվացնելու իր ռազմական միջուկային ծրագիրը: Նրա խոսքերով, Իրանի հոգեւոր առաջնորդ Ալի Խամենեին կարող է կոչ անել ստեղծելու միջուկային զենք, որպեսզի հնարավոր լինի «պաշտպանվել նման զենք ունեցող երկրից»: Խոսքը Իսրայելի մասին է, որը պաշտոնապես չի խոստովանում սեփական միջուկային զենքի գոյությունը, բայց օտարերկրացի փորձագետները կարծում են, որ իսրայելական բանակի զինանոցներում կան տասնյակ, գուցեեւ հարյուրավոր մարտագլխիկներ: Այդ մասին հաղորդում է newsru.co.il կայքը:

Դագանը նախազգուշացրել է, որ Իրանի վրա Իսրայելի հարձակումը կարող է հանգեցնել ծավալուն տարածաշրջանային պատերազմի, քանի որ հակամարտությանն անմիջապես կմիջամտի լիբանանյան «Հզբոլլահ» խմբավորումը, թերեւս՝ նաեւ Սիրիան:

Անցյալում Դագանն արդեն ասել էր, որ Իրանի միջուկային ծրագիրն այնքան էլ արագ չի զարգանում եւ որ մինչեւ 2015 թ. Իրանը ատոմային ռումբ չի ունենա: Պ. Ք.

# Միթ Ռոմնին կպայքարի ԱՄՆ նախագահության համար

Մասաչուսեթսի նախկին նահանգապետ, հանրապետական Միթ Ռոմնին պաշտոնապես հայտարարել է, որ պայքար է սկսում իր կուսակցությունից ԱՄՆ նախագահության թեկնածու առաջադրվելու համար: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:



Նյու Հեմփշիրում ելույթ ունենալով՝ Ռոմնին շեշտը դրել է նախագահ Բարաք Օբամայի տնտեսական քաղաքականությունը քննադատելու վրա: Միեւնույն ժամանակ Ռոմնին իրեն ներկայացրել է որպես հաջողակ ձեռնարկատեր, որը հանդես է գալիս տնտեսական ազատության եւ յուրաքանչյուրի հաջողության հնարավորության օգտին: Նա հիշեցրել է, որ Մասաչուսեթսի նահանգապետ եղած տարիներին ինքը 19 անգամ փրկել է նահանգի բյուջեն:

Գելլապ հասարակության անցկացրած հարցման տվյալների համաձայն, հանրապետական թեկնածուների մեջ առաջատարը Ռոմնին է՝ 17 տոկոս: Երկրորդ տեղում է Ալյասկայի նախկին նահանգապետ Սառա Փեյլինը (15 տոկոս), երրորդում՝ Տեխասի կոնգրեսական Ռոն Փոլը (10 տոկոս): Ի դեպ, Փեյլինը դեռ պաշտոնապես չի առաջադրել իր թեկնածությունը:

Դեմոկրատներից նախագահական ընտրություններին մասնակցելու մտադրություն է հայտնել ներկայիս նախագահ Բարաք Օբաման: Ընտրություններն անցկացվելու են 2012-ի նոյեմբերին:

# Շվեդները պահանջում են թագավորի հրաժարականը

*Նա կապեր ունի մաֆիայի հետ*



Շվեդիայի թագավորական ընտանիքը տենդի մեջ է: Վերջերս պայթած սկանդալները կապված էին թագուհի Սիլվիայի հոր նացիստական անցյալի եւ Նորին մեծություն Կառլ 16-րդ Գուստավի շվայտությունների հետ, իսկ հիմա արդեն հայտնի են դարձել նոր փաստեր, որոնք հաստատում են թագավորի կապը հարավսլավական մաֆիայի հետ: Վրդովված շվեդները պահանջում են, որ թագավորը հրաժարվի գահից:

Երկրի գրախանութներում հայտնվել է լրագրող Կիմն Նուրիի «Շվեդական կնքահայրը» վավերագրական գիրքը: Այնտեղ նշվում է, որ թագավորը հաճախ հյուրընկալվել է հարավսլավացի մաֆիականների կազմակերպված երեկույթներում, որոնց մասնակցել են նաեւ պոռնիկներ:

Այդ միջոցառումներն անցկացվում էին մասնավոր բնակարաններում, փակ ակումբներում: 1990-ականներին Ստոկհոլմում Club Power ընդհատակյա ակումբի տերը եղած գանգստեր Միլլե Մարկովիչը «Աֆտոնբլադետ» թերթին տված հարցազրույցում ասել է, որ ակումբը թագավորի եւ նրա բարեկամների հանգստի ու զվարճանքի վայրերից էր եւ որ ինքը ունի բազմաթիվ տեսագրություններ:

Գրքում ընդգծվում է, որ թագավորի մերձավորները փորձել են գնել այն լուսանկարները, որոնցում Կառլ 16-րդ Գուստավը անվայել տեսք ունի: Մամուլում հայտնվել է թագավորի բարեկամ, գործարար Անդերս Լետստրեմի հեռախոսազրույցների տեքստը. Նա փորձել էր գանգստերներից «անաղմուկ» գնել վարկաբեկիչ նյութերը, բայց հաջողության չէր հասել, քանի որ մաֆիականները մի քանի անգամ բարձրացրել էին գները:

Հիմա, երբ գաղտնին արդեն հայտնի է դարձել, արքունիքը փորձում է ժխտել մաֆիայի հետ բանակցելու փաստը, պնդելով, թե Լետստրեմն իբր բանակցել է սեփական նախաձեռնությամբ, առանց թագավորի գիտության: Ներկայումս Լետստրեմը զրկված է իր երբեմնի ընկերության վարչության նախագահի պաշտոնից եւ խուսափում է լրագրողներից:

Թագավորի արկածները վերլուծող շվեդ մեկնաբանները գտնում են, որ կարելի է ներել շատ բաներ, նույնիսկ՝ նրա զեխությունները պոռնիկների հետ, սակայն մաֆիայի շանտաժի դեմ հանդիման խոցելի դառնալուց Կառլ 16-րդ Գուստավը անցել է պետության ղեկավարի համար թույլատրելի սահմանագիծը:

Վերջին սկանդալի կապակցությամբ հրապարակված հարցման արդյունքները վկայում են, որ շվեդների 63 տոկոսը պահանջում է միապետի հրաժարականը եւ գահի փոխանցումը արքայադուստր Վիկտորիային: Շվեդների միայն 29 տոկոսն է կարծում, որ Կառլ 16-րդ Գուստավը կարող է ցմահ գահակալել:

# Այվազովսկու գողացված կտավը իր տեղը գտավ Ազգային պատկերասրահում



ՖՈՏՈԼՈՒՐ

Երեկ Ազգային պատկերասրահի Այվազովսկու ցուցասրահները մարդաշատ էին: ՀՀ մշակույթի նախարարությունը պատկերասրահին հանձնեց աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու «Փոթորիկ ժայռոտ ափին» ստեղծագործությունը (1875 թ., կտավ յուղաներկ, 73x102 սմ), որը 21 տարի առաջ գողացվել էր Երեւանի Արտասահմանյան երկրների հետ բարեկամության եւ մշակութային կապերի ընկերությունից (ԱՕԿՍ): Թե ինչպե՞ս է գողացված կտավը հայտնաբերել արվեստաբան Շահեն Խաչատրյանը, **«Ազգը»** առաջինն է անդրադարձել դեռեւս մարտի 1-ին «Այվազովսկու գլուխգործոցը գտնվեց» վերտառությամբ հոդվածով: Եվ ահա, տարբեր հավաքորդների կողմից մի քանի անգամ վերագտնված այդ հայտնի կտավը, Մոսկվայից կտավի սեփականատեր, ՌԴ սենատոր Հովհաննես Օհանյանի, Մշակութային ժառանգության պահպանմանն ուղղված օրենսդրության կատարման վերահսկողության Դաշնային ծառայության ղեկավար Վիկտոր Պետրակովի, նույն բաժնի վերադարձման պատասխանատու Օլեգ Դերեվյանկոյի, արվեստաբան Շահեն Խաչատրյանի ուղեկցությամբ «Փոթորիկ ժայռոտ ափին» գործը երկար դեգերումներից հետո տեղափոխվեց Երեւան ու հանդիսավորությամբ հանձնվեց մեր պատկերասրահին: ՀՀ մշակույթի նախարար **Հասմիկ Պողոսյանը** ջերմ շնորհակալական խոսքեր հղեց բոլոր նրանց, ովքեր նպաստել էին մեր ազգային արժեքի հայտնաբերմանը: ՀԱՊ-ի ֆոնդերում պահվող Այվազովսկու շուրջ 200 աշխատանքները, որոնցից 65-ը գեղանկար են, բոլորն էլ նվիրատվություն են եւ դրանց շարքը ավելացավ եւս մեկով՝ Հովհաննես Օհանյանի կողմից: Երբ փաթեթավորված կտավը բացվեց ուղեկցողների ու լրագրողների առաջ, հնչեցին բուռն ծափերը... **«Ազգի»** հարցերին պատասխանելով կտավի սեփականատեր **Հովհաննես Օհանյանն** ասաց, որ իր հավաքածուներում, որոնք 100-ից ավելին են, կան Այվազովսկու, Շիշկինի, Լեւիտանի, Պոլենովի, Մինասի, Բաշինջաղյանի, Նալբանդյանի եւ այլոց գործերը:

«Ես շատ ուրախ եմ, որ այս արժեքավոր գլուխգործոցը հայտնվել է ինձ մոտ եւ երեւի իվերուստ էր դա որոշված, որ մի օր գալու է այն պահը, երբ Այվազովսկու կտավը վերադառնա Հայաստան: Ահա եկել է այդ օրը եւ ես տրտանց այն նվիրում եմ Ազգային պատկերասրահին: Չնայած որ Այվազովսկու այդ կտավը զարդարում էր իմ հավաքածուն, սակայն ես չեմ դադարելու ձեռքբերել Այվազովսկու այլ գործեր»:

Արվեստաբան **Շահեն Խաչատրյանը «Ազգի»** հետ զրույցում ասաց, որ շատ ուրախ է, որ կտավը գտնվեց ու այժմ Երեւանում է: «Շնորհակալ եմ մշակույթի նախարարից, որ ինձ հատուկ ուղարկեց Մոսկվա նկարի իսկությունը ճշտելու: Վերականգնող մասնագետները այնպես հմտորեն էին աշխատել ու անգամ կտավի անկյունում նկարչի ստորագրության երկու տառերը բացակայում էին (գողացողների մեղքով), չեն վերականգնվել: Կցանկանայի, որ Այվազովսկու մյուս կտավները, որոնց թվում է նաեւ «Տիեզերք. աշխարհի արարումը» կտավը (նվիրված Խրիմյան Հայրիկին), որը Ազգային գրադարանից ճիշտ նույն տարում գողացվել է, նույնպես վերագտնվեր», ասաց արվեստաբանը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Կայացավ սփյուռքի նախարարության ծրագրով հրատարակված 10 գրքերի շնորհանդեսը



Երեկ ՀՀ սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանը** ներկայացրեց նախարարության նախաձեռնությամբ եւ պատվերով հրատարակված 10 անուն գրքերն ու մեկ սկավառակը: 2010-2011 թթ. հրատարակված այդ գրքերի շնորհանդեսին ներկա էին հեղինակներն ու գիտական ինստիտուտների ղեկավարներ, ներկայացուցիչներ: Նախարարը նշեց, որ նախարարությունը իր ստեղծման օրից համագործակցել է երեք կարեւորագույն հաստատությունների հետ՝ ԵՊՀ, ՀԳԱԱ եւ նրա ինստիտուտները եւ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ: ԵՊՀ-ի սփյուռքագիտության ամբիոնի վարիչ, դոկտոր, պրոֆեսոր **Յուրի Ավետիսյանը** ներկայացրեց «Արեւմտահայերենի քերականության գործնական աշխատանքների ձեռնարկը», որը հիմնականում նախատեսված է բանասիրության ֆակուլտետի, մագիստրատուրայում սովորող ուսանողների համար: Ձեռնարկը բաղկացած է երեք բաժնից՝ վարժություններ եւ գործնական առաջադրանքներ արեւմտահայերենի քերականության վերաբերյալ, բնագրեր արեւմտահայ եւ սփյուռքահայ գրականությունից, եւ բառացանկ՝ շուրջ 1000 բառերի բացատրությամբ:

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի ղեկավար **Գագիկ Հարությունյանն** ասաց, որ նախարարության հետ համագործակցության երկու տարիների ընթացքում հրատարակվել է 3 գիրք՝ «Հետխորհրդային երկրների հայկական համայնքների ինքնության խնդիրները եւ տեղեկատվական ռեսուրսները», «Հայկական համայնքների ինքնակազմակերպման խնդիրները Հարավային Ռուսաստանում» եւ «Հայ համայնքն ԱՄՆ-ում»: Գրքերում լուսաբանվում են սփյուռքյան համայնքների ներուժը, նաեւ այն բազմաթիվ խնդիրները, որոնք հայության հարցերով զբաղվող փորձագետների եւ ընթերցողների լայն շրջանակների համար օգտակար կլինեն:

Գրականագետ Ռուբեն Կարապետյանը ներկայացրեց «**Об армянской диаспоре в России**» աշխատությունը, որում ընդգրկված է հայերի վիճակը ռուսական միջավայրում եւ էթնիկական զարգացումները:

Այնուհետեւ **Վարդան Դեւրիկյանը**, ներկայացնելով ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի աջակցությամբ կազմված «Գրական Սփյուռք» տարեգիրքը, ասաց, որ տարեգրքում ներկայացված են գրականության ոճերը՝ պոեզիա, արձակ, դրամատուրգիա, գրականագիտություն, որոնք ներկայացնում են սփյուռքի գրական աշխարհի զարգացման պրոցեսները:

Գրականագետ **Ալեքսանդր Թոփչյանը** ներկայացրեց «Ռուբեն Սեւակ հատընտիր» գիրքը, որը տպագրվել է գրողի ծննդյան 125-ամյա հոբելյանի առիթով, եւ նաեւ Ռուբեն Սեւակ բանաստեղծի գրական գործունեությունը եւ շնորհակալություն հայտնեց նախարարին նման բարձր մակարդակով գրողի հոբելյանական միջոցառումները նշելու համար: Դերասանուհի **Անահիտ Թոփչյանը** ներկաների համար ընթերցեց Ռ. Սեւակի բանաստեղծություններից: Խտասալիկը, որում զետեղված էր գրողի գործերի ընթերցումները Անահիտ Թոփչյանի կատարմամբ, արժանացել է բարձր գնահատականի: Փորձագետ **Լիլիթ Միրզոյանը** ներկայացրեց «Արտերկրում գտնվող հայկական պատմամշակութային ժառանգության իրավական կարգավիճակը» գիրքը, որում տեղ են գտել շատ լուրջ ուսումնասիրություններ ու հետազոտություններ, որոնց միջոցով հնարավոր կլինի պարզել Ֆրանսիայում, Կիպրոսում, Լեհաստանում, Պորտուգալիայում եւ Ավստրիայում գոյություն ունեցող հայկական պատմամշակութային ժառանգության իրավական վիճակը, օրենսդրությունն ու խնդիրները:

Ս. Ս.



# Մեծարման հանդես Լոնդոնում՝

## նվիրված Կոստան Զարյանին



Մայիսի 14-ին, շաբաթ օրը, Լոնդոնի Նավասարդյան սրահում տեղի ունեցավ գրական-գեղարվեստական շքեղ երեկո նվիրված հայ մեծանուն գրող, փիլիսոփա-արվեստաբան Կոստան Զարյանին (1885-1969):

Ժամը 19-ից սկսյալ, մինչ հանդիսականները իրենց տեղերը կզբաղեցնեին նորոգ ու գեղեցիկ դահլիճում, խոշոր պաստառի վրա ցուցադրվում էին Զարյանի կյանքի տարբեր տարիների լուսանկարները:

Համայնքի ճանաչված մտավորական **Մանուել Ադամյանը** բացման խոսք ասաց, որից հետո պատմեց իր անձնական հանդիպումներն ու հիշողությունները մեծ գրողի մասին Բեյրութում եւ Երեւանում:

Այնուհետեւ Զարյանի կյանքը եւ գործը հանգամանորեն ներկայացրեց բանաստեղծ-արվեստաբան **Սեդա Անանյանը**, որը 1966-1967 թթ. աշխատել է գրողի հետ որպես նրա քարտուղար-օգնական: Բանախոսը ըստ ժամանակագրության ծանոթացրեց հեղինակի հիմնական գործերը («Անցորդը եւ իր ճամբան», «Տատրագոմի հարսը», «Բանկոոպը եւ մամութի ոսկորները», «Սպանիա», «Միացյալ նահանգներ», «Նավը լեռան վրա», «Կղզին եւ մի մարդ» եւ այլն), նշելով, որ հիշյալ ստեղծագործությունները առաջին անգամ տպագրվել են Բոստոնի «Հայրենիք» ամսագրում: Նա կարեւորեց նաեւ այն հանգամանքը, որ չնայած Կոստան Զարյանի անհատականությունն ու գեղագիտական մտածողությունը ձեւավորվել է Եվրոպական, հատկապես Իտալական մշակույթի միջավայրում, նա աներկբա իրեն զգացել է հայ գրող, «կասեինք՝ հայ ժողովրդի ճակատագիրը որոնող մի մարգարե», ասաց բանախոսը:

«Հայաստանում ապրած տարիներին (1962-1969 թթ.) իշխանության հանիրավի որոշ կեցվածքից մեծ գրողը թեեւ չունեցավ իր արժանի լայն ճանաչումը, սակայն նա մեծապես հարգված էր մտավոր դասակարգից, իր ներկայությամբ շքեղացնելով Երեւան մայրաքաղաքը», իր խոսքը ավարտեց բանախոսը:

Հաջորդ խոսնակը բանաստեղծ **Թամար Գեղամյան-Մինասյանն** էր, որը մեկնաբանեց Զարյանի «Նավը լեռան վրա» (Բոստոն, 1943) ծավալուն վեպը՝ տալով իր ուրույն եւ դիպուկ վերլուծությունը այդ գործի գաղափարական բովանդակության եւ հայ ժողովրդի ճակատագրով մտահոգ գրողի պայծառատեսության:

Վերջին բանախոսը դոկտոր Գագիկ Թամանյանն էր (անվանի ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի թոռը), որը խոսեց Զարյանի «Երեք երգեր» վիպերգի իտալերեն հրատարակության (1916 թ.) մասին: Նա նշեց, որ այս ստեղծագործության ներշնչմամբ Օտտորինո Ռեսպիգին (1879-1936) հորինում է «Լա պրիմավերա» կոչվող կանտատը 1919-ին: Երեկոյին, Սլովակիայի ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբի եւ ֆիլհարմոնիկ երգչախմբի կատարմամբ լսվեց մի հատված այդ կանտատից:

Հանդեսին իր շնորհալի մասնակցությունը բերեց ներկայիս Գլազգոյի (Շոտլանդիա) կոնսերվատորիայի ուսանողուհի, գեղատեսիլ եւ խոստումնաշատ երգչուհի **Անուշ Հովհաննիսյանը**, որը բացառիկ զգացողությամբ կատարեց Նարեկացու խոսքերով «Հավուն-Հավուն» շարականը եւ Կոմիտասի «Օրորը»:

Ելույթներ ունեցան նաեւ պատանի ջութակահար **Գրիգոր Հարությունյանը** (Պագանինի՝ «Կանտաբիլե») եւ 12-ամյա **Շուշանիկ Հարությունյանը** (Պոլ Նորիս՝ «Ֆանտաստիկ Ֆինալ» կլառնետի համար):

Այնուհետեւ **Րաֆֆի Եղիկյանը** մեծ ներշնչումով արտասանեց Կոստան Զարյանի «Ձին, գառնուկը եւ Հայաստանը» բանաստեղծությունը:

Հանդեսն ավարտվեց Զարյանի «Կոմիտաս վարդապետին» հոգեցունց բանաստեղծության ձայնագիր ունկնդրմամբ: Կարդում էր սիրված դերասան **Վոլոդյա Աբաջյանը**, որին ձայնակցում էր Հայաստանի պետական երգչախումբը՝ առավել արտահայտչականություն հաղորդելով դերասանի ասմունքին:

Հանդիսականները հեռացան դահլիճից խորապես տպավորված եւ գոհ, իրենց հետ մասնիկ տանելով Կոստան Զարյանի հայրենաշունչ ոգուց:

Շնորհակալություն «Նավասարդյան կենտրոնի» պատասխանատու անձնակազմին. որ ջանք չէին խնայել աջակցելու հանդեսին, շնորհակալություն երեկոյի բոլոր կազմակերպիչներին եւ հատկապես Լոնդոնի Համայնքային եւ Եկեղեցական խորհրդին, հեսաքրքրական ու բովանդակալից միջոցառման համար:

Հուսով ենք, որ նման միջոցառումներ ավելի հաճախ կունենա լոնդոնահայ համայնքը:

ԼՈՒՍԻՆԵ ՄԵՅՍՈՒՐ
Լոնդոն, 16 մայիսի 2011 թ.

# Բացվեց Գեորգի Յակուլովի ցուցահանդեսը



Ազգային պատկերասրահում երեկ բացվեց ճանաչված նորարար նկարիչ, ռուսական եւ հայկական բեմանկարչությունում կոնստրուկտիվիզմի հիմնադիր՝ Գեորգի Յակուլովի ստեղծագործությունների ցուցահանդեսը: Չորս սրահներում ցուցադրված էին նրա գեղանկարչական, գրաֆիկական, թատերական ձեւավորումների 86 նմուշներ (130 հավաքածուից): Այս ցուցադրությանը նախորդել է գիտահետազոտական աշխատանք՝ ուսումնասիրվել են նկարչի թանգարանում գտնվող բոլոր ստեղծագործությունները, ինչի արդյունքում կազմվել է Յակուլովի ստեղծագործությունների առաջին գիտական կատալոգը, որն ընդգրկում է 130 միավոր: Ցուցահանդեսից առաջ պատկերասրահի տնօրեն Փարավոն Միրզոյանը ներկայացրեց այն երկու ալբոմները, որոնք նվիրվել են Յակուլովին՝ հեղինակությամբ Վիկտորիա Բադալյանի եւ Իրինա Բաղդամյանի: Յակուլովի ստեղծագործական ուղու մասին մանրամասներ ներկայացրեց արվեստաբան Երվանդ Տեր-Խաչատրյանը:

Ցուցահանդեսը բաց կլինի մեկ ամիս:

Ս. Ս.

# Սկզբունքային մրցավեճը կշարունակվի Սանկտ Պետերբուրգում

*Միայն դրական արդյունքի դեպքում հնարավոր կլինի պայքարել ուղեգրի համար*

Այսօր Երեւանի ժամանակով 20-ին Սանկտ Պետերբուրգի «Պետրովսկի» մարզադաշտում ֆրանսիացի մրցավար Ստեֆան Լաննուան կազդարարի Ռուսաստան-Հայաստան ընտրական մրցախաղի մեկնարկը: Ընտրական 2-րդ խմբի առաջատարներից մեկի հետ կայանալիք հանդիպումը սկզբունքային նշանակություն ունի Հայաստանի հավաքականի համար, որն իր պատմության մեջ առաջին անգամ իրական հնարավորություն է ստացել պայքարելու Եվրոպայի առաջնության եզրափակիչի ուղեգրի համար: Միայն ռուսների հետ դրական արդյունքի դեպքում մեր ֆուտբոլիստները կարող են հավակնել բաղձալի ուղեգրին:

Հայաստանի հավաքականն ընտրական այս հանդիպմանը սկսել էր նախապատրաստվել մայիսի 31-ից: Մեր ընտրանին չարտերային չվերթով երեկ կեսօրին ժամանեց Սանկտ Պետերբուրգ՝ հանգրվանելով քաղաքի լավագույն հյուրանոցներից մեկում՝ «Մարիոթ Կորտյարդում»: Հավաքականի կազմում Սանկտ Պետերբուրգ են ժամանել 19 ֆուտբոլիստներ: Հավաքին մասնակցած ֆուտբոլիստներից Երեւանում են մնացել Արտակ Դաշյանն ու Արտակ Գրիգորյանը: Երեկ երեկոյան Հայաստանի հավաքականի ֆուտբոլիստները մարզվել են «Պետրովսկի» մարզադաշտում, որտեղ այսօր մեր ընտրանուն իրոք լուրջ փորձություն է սպասվում:

Որքան էլ որ ռուսական լրատվամիջոցները քննադատում են հավաքականի գլխավոր մարզիչ Դիկ Ադվոկատին ու նրա սաներին, միեւնույն է, ՌԴ հավաքականն իրենից մեծ ներուժ է ներկայացնում եւ իրավամբ ընտրական 2-րդ խմբի հաղթողի գլխավոր հավակնորդն է: Անշուշտ, ռուսները սեփական հարկի տակ ձգտելու են հաղթանակի ու դրա համար չեն խնայելու իրենց ուժերը՝ առաջին իսկ րոպեներից դիմելով ակտիվ գործողությունների: Շատ կարեւոր է, որ մերոնք խաղասկզբում կարողանան դիմագրավել մրցակցին, խուճապի չմատնվեն եւ հուսալի գործեն պաշտպանությունում: Դրանում իհարկե իրենց վճռորոշ դերը պետք է ունենան դարպասապահ Ռոման Բերեզովսկին ու հավաքականի ավագ Սարգիս Հովսեփյանը, որոնք վարպետության եւ փորձառության շնորհիվ պետք է համախմբեն իրենց խաղընկերներին՝ ղեկավարելով պաշտպանական օղակի գործողությունները:

Պակաս կարեւոր չէ առջեւի գծում հմուտ խաղի շնորհիվ սուր հակագրոհների միջոցով գոլային պահերի ստեղծումն ու դրանց իրացումը: Այստեղ շատ բան կախված կլինի Յուրա Մովսիսյանի եւ Հենրիխ Մխիթարյանի խաղից, որոնք համագործակցելով Մարկոսի, Էդգար Մանուչարյանի ու Գեւորգ Ղազարյանի հետ, պետք է ձգտեն վերջապես գրավել ՌԴ հավաքականի դարպասը: Չէ՞ որ ռուսների հետ կայացած նախորդ 3 հանդիպումներում մեր ֆուտբոլիստները դեռեւս չեն գտել մրցակցի դարպասի բանալին: 1999-ին կայացած ընտրական 2 մրցախաղերում էլ հաղթել են ռուսները (3-0, 2-0), իսկ այս տարվա մարտի 26-ին Երեւանում կայացած խաղում դարպասները մնացել են անառիկ: Հուսանք, որ վերջապես ռուսների հետ խաղում էլ կվայելենք խփած գոլի հաճույքը, մանավանդ որ ՀՀ հավաքականն իռլանդացիների հետ առայժմ ամենաարդյունավետն է 2-րդ խմբում՝ 5 խաղում խփելով 9 գոլ:




Ներկայացնենք առաջիկա խաղի վերաբերյալ ՀՀ հավաքականի մի քանի խաղացողների կարծիքները:

**Յուրա Մովսիսյան**-Մենք հաղթանակի հասնելու ձգտումով ենք խաղադաշտ դուրս գալու: Սակայն ՌԴ հավաքականի պես բարձրակարգ թիմի հետ ոչ-ոքի արդյունքն էլ մեզ համար պետք է դրական համարել, քանի որ ուղեգրի համար պայքարելու հնարավորությունից չենք զրկվի: Ճիշտ է, այդ դեպքում խնդիրը զգալիորեն բարդանում է, քանի որ հարկ կլինի մրցակցի դաշտում հաղթել Իռլանդիայի եւ Սլովակիայի հավաքականներին: Եթե ֆուտբոլիստներին հաջողվի կատարել մարզչի առաջադրանքը, ապա հարձակման գծում մենակ չեմ մնա: Կազմակերպված գործելու դեպքում մեր գրոհներին մշտապես պետք է 4-5 խաղացողներ մասնակցեն: Հարկավոր է շատ գրագետ գործել եւ օգտագործել գոլային պահերը: Համոզված եմ, որ Սանկտ Պետերբուրգում ավելի որակյալ խաղ ենք ցուցադրելու:

**Հենրիխ Մխիթարյան**-Մեր ընտրանու բոլոր խաղացողներն էլ քաջ գիտակցում են խաղի կարեւորությունը եւ ներդնելու են բոլոր ուժերը հաջողության հասնելու համար: Առաջին անգամ իրական հնարավորություն է ստեղծվելու Եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլ մտնելու, որի հանդիպումները կայանալու են մի երկրում, որտեղ խաղում եմ իմ խաղընկեր Կառլեն Մկրտչյանի հետ: Հավատում եմ մեր հաջողությանը:

**Մարկոս Պիզելի**-ՀՀ առաջնությունում 6 գնդակով գլխավորում եմ լավագույն ռմբարկուների ցանկը եւ լավ մարզավիճակում եմ: Գտնում եմ, որ օգտակար կլինեմ հավաքականին: Թեեւ ՌԴ հավաքականն ամենաուժեղն է մեր խմբում, սակայն մրցակցի հետ արդեն խաղացել ենք ու գիտենք ուժեղ եւ թույլ կողմերը: Իմ կարծիքով ՌԴ հավաքականում ամենաուժեղն Անդրեյ Արշավինն է: Մենք ողջ հանդիպման ժամանակ պետք է գործենք կենտրոնացված, պահպանենք խաղային կարգապահությունը, որպեսզի թույլ չտանք մրցակցին գոլ խփելու: Գուցե ՌԴ հավաքականը կարգով գերազանցում է մեզ, սակայն մենք էլ ներկայումս բավականին ուժեղ ենք: Մեր թիմում էլ խաղացողներ կան (Հենրիխ Մխիթարյան, Յուրա Մովսիսյան), որ ունակ են միայնակ վճռել հանդիպման ելքը: Կարեւորն այն է, որ մեր հավաքականը լավ մարզավիճակում է, պատրաստ է ճակատամարտ տալու եւ ինչո՞ւ չէ՝ նաեւ հաղթելու:

Ինչ վերաբերում է բուքմեյքերներին, ապա նրանք զգալի առավելություն են տալիս ՌԴ հավաքականին, որի հաղթանակը գնահատել են 1,2 գործակցով: Իսկ ահա ՀՀ հավաքականի հաղթանակի գործակիցը 12,5-13 է: Ոչ-ոքին գնահատվել է 5,8-6:

Այսօր ընտրական 2-րդ խմբում կկայանան նաեւ Մակեդոնիա-Իռլանդիա, Սլովակիա-Անդորրա հանդիպումները:

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Սլովակիա | 5 | 3 | 1 | 1 | 5-4 | 10 |
| 2. Ռուսաստան | 5 | 3 | 1 | 1 | 6-3 | 10 |
| 3. Իռլանդիա | 5 | 3 | 1 | 1 | 9-6 | 10 |
| 4. Հայաստան | 5 | 2 | 2 | 1 | 9-4 | 8 |
| 5. Մակեդոնիա | 5 | 1 | 1 | 3 | 5-6 | 4 |
| 6. Անդորրա | 5 | 0 | 0 | 5 | 1-12 | 0 |

ՇԱԽՄԱՏ

## Ոչ-ոքի առաջատարի հետ

**Հնդկաստանում ընթացող շախմատի մրցաշարի 7-րդ տուրում ուշադրության կենտրոնում Տիգրան Պետրոսյանի մրցավեճն էր միանձնյա առաջատար Մագեշ Պանչանաթանի հետ, որում հայ շախմատիստը խաղում էր սպիտակներով: Գրանցվեց ոչ-ոքի: 7 տուրից հետո Պետրոսյանը 5,5 միավորով 7-րդ տեղում է: Նա ընդամենը կես միավոր է զիջում հնդիկ շախմատիստներ Սթանուին, Աբհիջեթ Գուպտային, Մագեշ Պանչանաթանին եւ Միխեիլ Մչեդլիշվիլուն:**

**Հաջող ելույթ է ունենում նաեւ Բելառուսը ներկայացնող Սերգեյ Կասպարովը, որը 5,5 միավորով 6-րդ տեղում է: Նա հաշտություն կնքեց Զիաուր Ռահմանի հետ: 8-րդ տուրում Պետրոսյանը սեւերով կխաղա հնդիկ Լաքսմանի հետ:**

## Եզրափակիչի մասնակիցները կորոշվեն ավարտական տուրում

**Թաիլանդում ընթացող ֆուտբոլի վետերանների աշխարհի առաջնության 3-րդ տուրում հայ ֆուտբոլիստները մրցեցին A խմբի մյուս առաջատարի՝ Ավստրալիայի հավաքականի հետ: Վերջինս աշխարհի գործող չեմպիոնն է ու մրցաշարում 2 հաղթանակ էր տոնել: Երկու առաջատարների մրցավեճում դարպասները մնացին անառիկ: Ավարտական տուրից առաջ Հայաստանի եւ Ավստրալիայի հավաքականները 7-ական միավորով գլխավորում են մրցաշարային աղյուսակը: Վերջին խաղում հայ ֆուտբոլիստները կմրցեն շոտլանդացիների հետ, որոնք ոչ-ոքի էին ավարտել հանդիպումը Թայվանի հավաքականի հետ:**

**B խմբում աղյուսակը գլխավորում են Իրանի եւ Նոր Զելանդիայի հավաքականները, որոնք 3-րդ անընդմեջ հաղթանակները տոնեցին: Իրանցի վետերանները 6-0 հաշվով ջախջախեցին ԱՄՆ-ի ընտրանուն, իսկ նորզելանդացիները 3 անպատասխան գնդակ ուղարկեցին Թաիլանդի 2-րդ հավաքականի դարպասը:**

**Նշենք, որ խմբերի հաղթողներն աշխարհի չեմպիոնի տիտղոսը կվիճարկեն եզրափակիչում, իսկ 2-րդ տեղերը զբաղեցրած հավաքականները կպայքարեն բրոնզե մեդալների համար:**

## Շարապովան դուրս մնաց պայքարից

**Թենիսի «Ռոլան Գարոսի» մրցաշարի կանանց մրցապայքարում որոշվեցին եզրափակիչի մասնակիցները: Ռուսաստանցի Մարիա Շարապովային չհաջողվեց առավելության հասնել չինացի թենիսիստուհի Նա Լիի նկատմամբ (4-6, 5-7) ու դուրս մնաց հետագա պայքարից: Եզրափակիչում Նա Լիի մրցակցուհին կլինի իտալուհի Ֆրանչեսկա Սկյավոնեն, որը միեւնույն 6-3, 6-3 հաշվով հաղթեց ֆրանսուհի Մարիոն Բարտոլիին:**

# ՀՀ հավաքականում ամենաբարձրը Հենրիխ Մխիթարյանի տրանսֆերային արժեքն է, ռուսներից՝ Անդրեյ Արշավինինը

Այսօր Սանկտ Պետերբուրգում կայանալիք Ռուսաստան-Հայաստան ընտրական մրցախաղի նախօրեին «Чемпионат.ру» կայքէջում ուշագրավ տվյալներ են հրապարակվել Հայաստանի եւ Ռուսաստանի հավաքականների ֆուտբոլիստների տրանսֆերային արժեքների վերաբերյալ, որոնք թույլ են տալիս համեմատություններ կատարել եւ հետաքրքրական փաստերի հանգել:

Եվ այսպես, ընտրական մրցախաղին նախապատրաստվող ՌԴ հավաքականում ընդգրկված 22 ֆուտբոլիստների տրանսֆերային ընդհանուր արժեքը 163,4 մլն եվրո է: Միջին հաշվով մեկ ֆուտբոլիստի տրանսֆերային արժեքը կազմում է 7,43 մլն եվրո: ՌԴ հավաքականի ֆուտբոլիստների տրանսֆերային ընդհանուր արժեքն ավելի քան 14 անգամ գերազանցում է Հայաստանի ընտրանու ցուցանիշը (11,35 մլն եվրո): ՀՀ հավաքականի յուրաքանչյուր ֆուտբոլիստի տրանսֆերային միջին արժեքը 540 հազար եվրո է:

ՌԴ հավաքականի ամենաթանկ ֆուտբոլիստը նախկինի պես Անդրեյ Արշավինն է, որի տրանսֆերը գնահատվում է 21 մլն եվրո: 2-րդ տեղում հավաքականի դարպասապահ Իգոր Ակինֆեեւն է՝ 17 մլն եվրո: Ամենացածր տրանսֆերային արժեքն ունի «Լոկոմոտիվի» պաշտպան Ռոման Շիշկինը՝ 2 մլն եվրո:

Հայաստանի հավաքականում առաջատարը Հենրիխ Մխիթարյանն է, որի տրանսֆերը գնահատվել է 5 մլն եվրո: 2-րդ ցուցանիշն ունի «Կրասնոդարի» հարձակվող Յուրա Մովսիսյանը՝ 1,5 մլն եվրո: Կայքէջում նշվում է, որ գուցե Ռոման Բերեզովսկու եւ Սարգիս Հովսեփյանի տրանսֆերային արժեքներն էլ բարձր լինեին, եթե նրանք տարեց չլինեին: Նրանց տրանսֆերը գնահատվել է 200-հազարական եվրո: Ամենացածր տրանսֆերային արժեքն ունի ՀՀ հավաքականի պահեստային դարպասապահ Ստեփան Ղազարյանը՝ 100 հազար եվրո:

Ընթերցողներին ենք ներկայացնում Հայաստանի եւ Ռուսաստանի հավաքականների ֆուտբոլիստների տրանսֆերային արժեքները (մլն եվրոյով) ըստ «Чемпионат.ру» կայքէջի:






**Հայաստանի հավաքական**

| | | |
|---|---|---|
| *Դարպասապահներ* | | |
| Ռոման Բերեզովսկի | «Խիմկի» | 0,2 |
| Ստեփան Ղազարյան | «Բանանց» | 0,1 |
| *Պաշտպաններ* | | |
| Սարգիս Հովսեփյան | «Փյունիկ» | 0,2 |
| Աղվան Մկրտչյան | «Միկա» | 0,2 |
| Ռոբերտ Արզումանյան | «Յագելոնիա» | 0,2 |
| Արթուր Յուզբաշյան | «Փյունիկ» | 0,15 |
| Արտակ Եդիգարյան | «Փյունիկ» | 0,15 |
| Հրայր Մկոյան | «Միկա» | 0,15 |
| Լեւոն Հայրապետյան | «Լեխիա» | 0,15 |
| Վալերի Ալեքսանյան | «Ուլիս» | 0,125 |
| *Կիսապաշտպաններ* | | |
| Հենրիխ Մխիթարյան | «Շախտյոր» | 5 |
| Մարկոս Պիզելի | «Փյունիկ» | 0,6 |
| Արտակ Դաշյան | «Բանանց» | 0,5 |
| Կառլեն Մկրտչյան | «Մետալուրգ» | 0,4 |
| Արթուր Եդիգարյան | «Պաս» | 0,35 |
| Գեւորգ Ղազարյան | «Փյունիկ» | 0,3 |
| Լեւոն Փաչաջյան | «Սանան նաֆթ» | 0,25 |
| Արտակ Գրիգորյան | «Ուլիս» | 0,15 |
| *Հարձակվողներ* | | |
| Յուրա Մովսիսյան | «Կրասնոդար» | 1,5 |
| Էդգար Մանուչարյան | «Փյունիկ» | 0,55 |
| Զավեն Բադոյան | «Իմպուլս» | 0,125 |

**Ռուսաստանի հավաքական**

| | | |
|---|---|---|
| *Դարպասապահներ* | | |
| Իգոր Ակինֆեեւ | ԲԿՄԱ | 17 |
| Վյաչեսլավ Մալաֆեեւ | «Զենիթ» | 5 |
| *Պաշտպաններ* | | |
| Ալեքսանդր Անյուկով | «Զենիթ» | 10 |
| Սերգեյ Իգնաշեւիչ | ԲԿՄԱ | 6,2 |
| Վասիլի Բերեզուցկի | ԲԿՄԱ | 5,2 |
| Ալեքսեյ Բերեզուցկի | ԲԿՄԱ | 4,5 |
| Ռենատ Յանբաեւ | «Լոկոմոտիվ» | 3 |
| Ռոման Շիշկին | «Լոկոմոտիվ» | 2 |
| *Կիսապաշտպաններ* | | |
| Յուրի Ժիրկով | «Չելսի» | 12 |
| Ալան Ձագոեւ | ԲԿՄԱ | 12 |
| Իգոր Դենիսով | «Զենիթ» | 12 |
| Դինիյար Բիլյալետդինով | «Էվերտոն» | 8 |
| Ալեքսանդր Ռյազանցեւ | «Ռուբին» | 4,5 |
| Իգոր Սեմշով | «Դինամո» | 4 |
| Դենիս Գլուշակով | «Լոկոմոտիվ» | 4 |
| Կոնստանտին Զիրյանով | «Զենիթ» | 3 |
| Ալեքսանդր Շեշուկով | «Սպարտակ» | 3 |
| Դմիտրի Տորբինսկի | «Լոկոմոտիվ» | 2,5 |
| *Հարձակվողներ* | | |
| Անդրեյ Արշավին | «Արսենալ» | 21 |
| Ալեքսանդր Կերժակով | «Զենիթ» | 10 |
| Ռոման Պավլյուչենկո | «Տոտենհեմ» | 9 |
| Պավել Պոգրեբնյակ | «Շտուտգարտ» | 5,5 |

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

## Օրվա հետքերով

# Առեղծվածային, անծանոթ Հայաստան «Վիսուս. Նոյյան տապան արշավախումբ» ֆիլմում

Հունիսի 2-ին, ժամը 20.15-ին գերմանական RTL-ը եթեր հեռարձակեց առեղծվածային մի պատմության վերաբերյալ իր թանկարժեք էկրանավորումը: «Վիսուս.Նոյյան տապան արշավախումբ» անվանյալ թրիլլերը մեր ուշադրությունը դժվար թե գրավեր, եթե այդ պատմությունն այս կամ այն կերպ չառնչվեր Հայաստանին:



Անահիտը Քյոլնի համալսարանի աստվածաբանության պրոֆեսոր Սյորենզենի ասիստենտն է եւ Միջերկրականի արեւելյան հատվածում 12-րդ դարում Ավետյաց Երկրից վերադարձին խորտակված նավը (խոսքը 1369-ին սուզված Catherine-ի մասին է) հետազոտելիս, առեղծվածային մասունք է հայտնաբերում: Հնգանկյուն՝ ներքին մեծ էներգիայով օժտված մասունքը նրա հրահանգով նավի տախտակամած են բարձրացնում արշավախմբի անդամները՝ ուսումնասիրելու, առանց կանխազգալու, որ կյանքին սպառնացող վտանգն են մոտեցնում իրենց: Ժանտախտի սպառնալիքը, որ դարեր ի վեր «ննջում էր» ծովի հատակին, այժմ իր ճիրաններն է տարածում: Հարուցիչը հետագայում գերմանացի երկու զբոսաշրջիկի մահվան պատճառ էլ է դառնում շատերի համար ծովափնյա սիրելի հանգստավայր Անթալիայում: Նրանով վարակված է նաեւ Անահիտը: Հնգանկյուն մասունքը Աստծո աչքն է: Գտածոն գերմանացի պրոֆեսորին ու նրա հայազգի ասիստենտին Նոյյան տապանը գտնելու հույսն է ներշնչում, բայց ֆիլմում անակնկալ բացահայտվում է հնգաթեւ խաչի դաջվածքը դաստակներին կրող հայկական գաղտնի՝ ընդհատակյա գործող մի եղբայրություն, որ խոչընդոտում է գիտնականների նախագծած ուղին՝ նախապես այլ առաքելության հավատարիմ լինելու նվիրական պայմանը չխախտելու ձգտումով: Նրանք ուզում են ոչնչացնել մեր ճանաչած աշխարհը՝ նորը՝ «կատարյալը երկնելու բարձր գիտակցությամբ»: Սատանայական նրանց նախագիծը կարող է միայն իրականություն դառնալ, երբ հաջողվի գտնել բեկված նավի հնգանկյուն՝ Հայկական լեռնաշխարհի վանքերից մեկում պահվող մասունքի զույգը ու դրանով՝ Աստծո զույգ աչքերը միացնել: Բայց ոչ ոք ճշգրիտ չգիտի վանքի տեղը: Դրա որոնումների ճանապարհն էլ լի է վտանգներով: Անահիտը, Սյորենզենը ու վերջինիս զարմիկ Ռոբերտը, որ արվեստի գործերի խուզարկու է, տաքուկ հայ վարորդ Հայկի օգնությամբ կարողանում են մահացու խոչընդոտները հաղթահարելով բացահայտել առեղծվածի տեղը, կանխել աշխարհակործան աղետը: Բարի վերջաբանի տրամաբանությամբ՝ հրաշքներով, առեղծվածներով լի Հայաստանում, սուրբ մասունքներ ամբարող վանքում Անահիտը սրբվում է ժանտախտի հետքերից: Ահա ձանձրանալու առիթ չտվող ֆիլմի շատ կարճ վերաշարադրանքը:

Ֆիլմում հայ դերասաններ չկան, բոլորը ծանոթ են գերմանական էկրանավորումներից: Անահիտ Սարյանի դերը մարմնավորում է Յուլիա Մոլքհոուն, արվեստի գործերի դետեկտիվ Ռոբերտի դերում Ստեփան Լուկան է: RTL-ը իր հինգմիլիոնանոց արտադրությունն իրականացել է Ռիչարդ Հայերի «Վիսուս» վեպի հիման վրա գրված Արնե Զոմմերի սցենարով: 125 րոպե տեւողությամբ ֆիլմի գործողությունները ի թիվս այլ վայրերի հիմնականում ծավալվում են Ստամբուլի, Անատոլիայի, Հայաստանի ու Երեւանի ծանոթ ու անծանոթ վայրերում, նաեւ՝ Ազգային գրադարանում:

Վերոհիշյալ ֆիլմի թրիլլերային «տրամաբանությունը» անշուշտ չի պարտադրում, թե արվեստին, պատմությանն առնչվող հենքն իրական փաստերի հիման վրա է կառուցված: Հայերի՝ առասպելի ու իրականության շաղախով կառուցված «Վիսուս» վեպին հայ գրաքննադատությունը ծանո՞թ է, թե՞ ոչ, ի՞նչ կարծիք ունի հայ եկեղեցին ֆիլմում արծարծված աստվածաբանական խնդիրների առնչությամբ, ֆիլմը Հայաստանի, հայության հանդեպ ինչպիսի՞ վերաբերմունք է ձեւավորում, նպաստավո՞ր է մեզ համար: Այս հարցերի մասին կուզենայինք լսել մասնագիտական գնահատական:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գերմանիա**

# Առողջապահության նախարարությունը զգուշացնում է

**Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների՝ վերջին օրերին Գերմանիայում արձանագրվել է ախտածին աղիքային ցուպիկով հարուցված սուր աղիքային վարակի 1534 դեպք, որից 15-ը՝ մահվան ելքով: Արձանագրված դեպքերից 470-ը եղել է հեմոռագիկ ուռեմիկ համախտանիշով, որից 9՝ մահվան ելքով: Հիվանդության դեպքերի 86%-ը արձանագրվել է 20 եւ բարձր տարիքով անձանց մոտ: Սույն աղիքային վարակն ընթանում է որովայնային ցավի եւ արյունային լուծի երեւույթներով, իսկ հեմոռագիկ ուռեմիկ համախտանիշը՝ սուր երիկամային անբավարարությամբ, սակավարյունությամբ: Վարակը կարող է փոխանցվել մարդուն սննդամթերքի, ջրի եւ այլնի միջոցով: Գերմանիայում արձանագրված բռնկման հետ կապված իրականացվում է համաճարակաբանական հետազոտություն, վարակի աղբյուրը դեռեւս չի պարզվել:**

**Հայաստանի Հանրապետությունում վերը նշված հիվանդության առումով համաճարակային իրավիճակը հանգիստ է:**

**ՀՀ առողջապահության նախարարության կողմից իրականացնում են բոլոր անհրաժեշտ կանխարգելիչ եւ հակահամաճարակային միջոցառումները՝ աղիքային վարակիչ հիվանդությունների եւ սննդային թունավորումների առաջացումը եւ տարածումը կանխելու համար:**

**ՀՀ առողջապահության նախարարությունը կոչ է անում բնակչությանը.**

**- չգնել անհայտ ծագման, ոչ սահմանված վայրերում եւ առանց պատշաճ ջերմաստիճանային եւ հիգիենիկ պայմանների վաճառվող, հատկապես արագ փչացող սննդամթերք,**

**- սննդամթերքը (մրգեր, բանջարեղեն, հատապտուղներ եւ այլն) օգտագործելուց առաջ լավ լվանալ միայն հոսող խմելու ջրով (չօգտագործել առուների, գետերի ջրերը),**

**- հետեւել ձեռքերի հիգիենային՝ հաճախակի լվացվել օճառով, հատկապես սնունդ պատրաստելուց եւ ուտելուց առաջ,**

**- սննդամթերքը պահել փակ տարաներում՝ ճանճերի աղտոտումը կանխարգելելու նպատակով,**

**- չթույլատրել երեխաներին լողալ դեկորատիվ ջրավազաններում, ոռոգման ջրանցքներում,**

**- խմելու ջուրը համային եւ գունային հատկությունների փոփոխությունների, տեսանելի նստվածքների առկայության դեպքերում օգտագործել միայն եռացնելուց հետո եւ անհապաղ ահազանգել ջրամատակարարման համակարգը սպասարկող եւ վերահսկող մարմիններին,**

**- ջրանջատումներից հետո ծորակից ջուրն օգտագործել որոշ ժամանակահատված հոսելուց հետո,**

**- աղիքային վարակիչ հիվանդությունների ախտանշանների (լուծ, որովայնի շրջանում ցավ, տենդ, փսխում) առկայության դեպքում անհապաղ դիմել բժշկի:**

# Շորերով գնաց՝ մերկ մնաց

Երեկ, ժամը 16.30-ի սահմաններում «**Ազգ**» օրաթերթ ահազանգ հնչեց քաղաքացուհի Հ. Գ.-ից, որ այցելել է «Ակվատեկ» մարզահամալիր: Երբ դուրս է եկել լողավազանից, պահարանում իր զգեստները չի գտել: Որքան էլ քաղաքացուհին աշխատակիցներից փորձել է ճշտել, թե ո՞վ է գողացել իր զգեստները, բոլոր ջանքերը ապարդյուն են ավարտվել:

«**Ազգը**» զանգահարեց 102 եւ խնդրեց ոստիկաններ ուղարկել «Ակվատեկ»: Սակայն 2 ժամ անց դեռ ոչ ոք չէր հայտնվել դեպքի վայրում, իսկ քաղաքացուհու առողջական վիճակը վատացել էր, ստիպված տնից եկել ու տարել էին նրան: Տեսնես թե էլ ինչ «անակնկալներ» են սպասվում նմանատիպ կառույցներում: Իսկ ոստիկանությունն ուշանում է ու չգիտես ինչո՞ւ:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 23-ի թիվ 2 որոշմամբ եւ հրապարակվում է**

***«Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն***

***Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ ԷՆ ՊԸԾՁԲ-11/01***

Պատվիրատուն՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, որը գտնվում է ՀՀ, ք. Երեւան, Մհեր Մկրտչյան 5 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել ինտերնետային կապի ծառայությունների գնման պայմանագիր (այսուհետեւ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու ինտերնետային կապի ծառայությունների ձեռքբերումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պայմանների համաձայն՝ պարզեցված ընթացակարգի հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ, ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային եւ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է, որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

Պարզեցված ընթացակարգի հրավերը փաստաթղթային տեսքով ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին մինչեւ սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից հաշված՝ 9-րդ օրը, ժամը 12:00-ն:

Պարզեցված ընթացակարգի հրավերը թղթային ձեւով տրամադրվում է անվճար:

Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ ք. Երեւան, Մհեր Մկրտչյան 5 հասցեով, մինչեւ սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 12:00-ն եւ դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պայմանների համաձայն պարզեցված ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների բողոքարկման խորհուրդ (Գնումների աջակցման կենտրոն, հասցեն՝ ք. Երեւան, Կոմիտասի 54/բ), «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետում՝ հինգ օրացուցային օրվա ընթացքում:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը, հայտարարում է բաց ընթացակարգ՝ ՀՀ ԱՎԾ-ԲԸԱՊՁԲ -2011/1 ծածկագրով: Գնման առարկա է հանդիսանալու ՀՀ ԱՎԾ կարիքների համար հաշվարարների պայուսակների ձեռքբերումը: Հրավերը թղթային տեսքով անվճար ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին մինչև սույն հայտարարությունը գնումների տեղեկագրում հրապարակելու օրվանից հաշված 38-րդ օրացուցային օրը, ժամը 12:00-ն, հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Կառավարական տուն 3, 613 սենյակ, հեռ.՝ 522251, Ռ. Մարտիրոսյանին: Հրավերը անձին տրամադրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաև անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչև դրանց բացման պահը՝ սույն հայտարարության գնումների տեղեկագրում հրապարակման օրվանից հաշված 40-րդ օրացուցային օրվա ժամը 11:00-ն:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը, հայտարարում է պարզեցված ընթացակարգ՝ ՀՀ ԱՎԾ-ՊԸԾՁԲ -2011/2 ծածկագրով: Գնման առարկա է հանդիսանալու ՀՀ ԱՎԾ կարիքների համար սխեմատիկ հատակագծերի կազմման ծառայությունների ձեռքբերումը: Հրավերը թղթային տեսքով անվճար ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին մինչև սույն հայտարարությունը գնումների տեղեկագրում հրապարակելու օրվանից հաշված 8-րդ օրացուցային օրը, ժամը 12:00-ն, հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Կառավարական տուն 3, 613 սենյակ, հեռ.՝ 522251, Ռ. Մարտիրոսյանին: Հրավերը անձին տրամադրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաև անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչև դրանց բացման պահը՝ սույն հայտարարության գնումների տեղեկագրում հրապարակման օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 12:00-ն:





ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60


Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 3.6.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: